


4199

Ն. ՌԻԲԿԻՆ

ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 9-ՐԴ ՅԵՎ 10-ՐԴ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

514
Դ-42

19 AUG 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԻՐԻ ԵՎ ԼԻԲՐԱՐԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

04 MAY 2010

514

Բ-42

Ն. ՌԻԲԿԻՆ

ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ
ՅԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
9 — 10-ՐԴ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐԱՐԴ ԽՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆ
ՔԱՐԳԱՆ. ԵՎ ԽԱՐԳԱՐ. ԱՐԱ. ԽԱՆՋՅԱՆ

821 29/5/39

ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

§ 1. ԱՂԵՂՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՓՈՒՄԸ

Անկյան յեվ աղեղի
հասկացողության
ընդհանրացումը

1. Ի՞նչ անկյուն է գծում ժամացույցի փոքր սլաքը 4 ժամվա ընթացքում: Ի՞նչ անկյուն կգծի նույն ժամանակամիջոցում մեծ սլաքը:

2. Մեքենայի անիվը 2 վայրկյանում կատարում է 6 պտույտ: Քանի՞ աստիճան է պտտվում անիվը 1 վայրկյանում և քանի՞ աստիճան՝ 10 վայրկյանում:

3. Ատամնավոր անիվն ունի 72 ատամ: Քանի՞ աստիճան է պտտվում այդ անիվը 1; 30; 144; 300 ատամ շրջվելիս:

4. Գծեցեք շարժական շառավղի դիրքը $+45^\circ$ -ի, -30° -ի, $+225^\circ$ -ի, -135° -ի, -90° -ի, $+450^\circ$ -ի, -810° -ի և $+2070^\circ$ -ի հավասար անկյունների համար:

Դրանցից վճիռ անկյունների համար շարժական շառավղիները համընկնում են:

5. Աստիճաններով արտահայտեցեք աղեղների հետևյալ դրամարը:


$\sim ABCAB + \sim BAC + \sim CDA$ (գծ. 1):

6. Գրեցեք անկյունների ընդհանուր ձևն այն դեպքերում, յերբ շարժական շառավղին ընդունում է՝ 1) OB , 2) OD դիրքը (գծ. 1): և գտեք այդ անկյունների մի քանի մասնավոր արժեքները:

7. 1) Շրջանի շառավղիը հավասար է 5 սմ-ի: Հաշվեցեք 18° պարունակող աղեղի չերկարությունը:

2) R շառավղին ունեցող շրջանի մեջ վորոշեցեք α° պարունակող աղեղի չերկարությունը:

8. 1) π թվի ոգնությունը կազմեցեք հետևյալ աղեղների համար



Գծ. 1



160
37

աղիանային արտահայտությունները. a) 30° ; b) 45° ; c) 60° ; d) 135° ; e) 15° ; f) $22^\circ 30'$; g) 36° ; h) 75° ; i) 108° ; k) 150° ; l) $157^\circ 30'$; m) 162° ;

2) Ռադիաններով արտահայտեցեք. a) 51° ; b) 27° ; c) $76^\circ 30'$; d) $12^\circ 30'$; e) $28^\circ 42'$; f) $73^\circ 21'$; g) 117° ; h) $216^\circ 13'$;

3) Ռադիաններով արտահայտեցեք կանոնավոր յեռանկյան, 4-անկյան, 5-անկյան, 6-անկյան և n-անկյան ներքին անկյունը:

9. 1) Աստիճաններով և ռոպեներով արտահայտեցեք $1,5$; 2 և $0,75$ ռադիանի հավասար անկյունները: Նույնպես և $\frac{\pi}{6}$; $\frac{2}{3}\pi$; $1\frac{1}{2}\pi$; $\frac{\pi}{8}$; $\frac{3}{4}\pi$; $1\frac{1}{5}\pi$ ռադիան պարունակող անկյունները:

2) Աստիճանային չափով (աղյուսակի ոգնությունը) արտահայտեցեք այն անկյունները, վորոնց ռադիանային չափերը հավասար են՝ $0,6981$; $1,3090$; $0,2356$; $1,0071$; $3,8048$; $0,48$; $1,3$; $0,8$:

10. $1,2$ մ լերկարություն շառավիղ ունեցող անիվը 1 ռոպեյում կատարում է 300 պտույտ:

1) Գտեք այդ անվի ω անկյունային արագությունը 1 վայրկյանում (անկյունային արագությունն արտահայտվում է ռադիաններով վայրկյան):

2) Գտեք անվի այն կետի շրջանագծային արագությունը, վորը կենտրոնից 20 սմ հեռավորության վրա յե գտնվում:

3) Գտեք անվի շրջանագծի վրա գտնվող կետի շրջանագծային արագությունը:

4) Ապացուցեք, վոր կենտրոնից r հեռավորության վրա գտնվող կետի պտտման շրջանագծային արագությունը հավասար է $r\omega$ -ի:

11. Լիսեռի անկյունային արագությունը հավասար է $21\frac{\text{ռադիան}}{\text{վայրկյան}}$ -ի: Վորոշեցեք այդ լիսեռի պտույտների թիվը 1 ռոպեյում:

§ 2. ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿՅԱՆ ՓՈՓՈԽՎԵԼՈՒ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

1. Վոր քառորդի մեջ են բոլոր յեռանկյունաչափական ֆունկցիաները դրական: Գոյություն ունի արդյոք այնպիսի քառորդ, վորի մեջ բոլոր ֆունկցիաները բացասական են:

2. Յեթի անկյունը պատկանում է յեռանկյան, ապա նրա յեռանկյունաչափական վոր ֆունկցիաները կարող են լինել բացասական և հատկապես յեթի:

3. Յեռանկյան մեջ կես անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաներն ինչ նշան ունեն:

4. Վոր սահմաններում կարող է փոփոխվել $1 + \sin x$ գումարը:

5. Հետևյալ հավասարություններից վորն է հնարավոր.

$$1) \sin \alpha = \frac{\sqrt{ab}}{\frac{1}{2}(a+b)}; \quad 2) \cos \beta = a + \frac{1}{a}; \quad 3) \sec \alpha = \frac{m^2 - n^2}{m^2 + n^2}$$

6. $\frac{\cos x}{\sec x}$ կոտորակը կարող է բացասական լինել:

7-13 խնդիրների մեջ պարզեցեք արտահայտությունները.

$$7. a \cdot \sin 0 + b \cdot \cos 90^\circ + c \cdot \operatorname{tg} 180^\circ$$

$$8. a \cdot \operatorname{tg} 0 + b \cdot \operatorname{ctg} \frac{\pi}{2} + c \cdot \sec 0$$

$$9. a \cdot \cos 0 + b \cdot \cos 180^\circ + c \cdot \cos 360^\circ$$

$$10. a^2 \cdot \sin \frac{\pi}{2} + 2ab \cdot \sec \pi - b^2 \cdot \sin \frac{3}{2}\pi$$

$$11. a^2 \cdot \operatorname{cosec} 90^\circ - 2ab \cdot \sin 180^\circ + b^2 \cdot \operatorname{cosec} 270^\circ$$

$$12. a^2 \cdot \sin 2\pi + 2ab \cdot \cos \frac{3}{2}\pi + b^2 \cdot \operatorname{tg} 2\pi$$

$$13. a^3 \cdot \operatorname{ctg} 270^\circ + b^3 \cdot \operatorname{tg} 90^\circ$$

14. 5 սմ լերկարության շառավիղ ունեցող շրջանի մեջ կառուցեք հետևյալ անկյունները. 30° ; 120° ; 225° ; -30° ; -120° ; -560° ; և այդ անկյունների չորս յեռանկյունաչափական գծերը: Յեռանկյունաչափական գծերը չափելով 1 մմ-ի ճշտությամբ, վորոշեցեք $(0,1$ -ի ճշտությամբ) հետևյալ ֆունկցիաների արժեքները.

$$1) \operatorname{tg} 30^\circ; \quad 2) \cos 120^\circ; \quad 3) \sin 225^\circ; \quad 4) \cos (-30^\circ); \quad 5) \operatorname{tg} (-120^\circ);$$

$$6) \operatorname{ctg} (-560^\circ):$$

15. Վորոշեցեք հետևյալ տարբերություններից յուրաքանչյուրի նշանը.

$$1) \sin 20^\circ - \sin 21; \quad 2) \cos 20^\circ - \cos 21^\circ; \quad 3) \operatorname{tg} 20^\circ - \operatorname{tg} 21^\circ; \quad 4) \operatorname{ctg} 20^\circ - \operatorname{ctg} 21^\circ; \quad 5) \cos 20^\circ - \cos 120^\circ; \quad 6) \sin 120^\circ - \sin 240^\circ; \quad 7) \operatorname{tg} 120^\circ - \operatorname{tg} 40^\circ; \quad 8) \operatorname{ctg} 30^\circ - \operatorname{ctg} 130^\circ;$$

16. Հետևյալ յուրաքանչյուր գույքի մեջ վոր ֆունկցիան ավելի մեծ արժեք ունի. 1) $\sin 20^\circ$ -ը, թե $\cos 20^\circ$ -ը, 2) $\sin 50^\circ$ -ը, թե $\cos 50^\circ$ -ը, 3) $\operatorname{tg} 40^\circ$ -ը, թե $\operatorname{ctg} 40^\circ$ -ը, 4) $\operatorname{tg} 50^\circ$ -ը, թե $\operatorname{ctg} 50^\circ$ -ը:

17. Կառուցեք այն անկյունները, վորոնց սինուսները հավասար են 1) $0,6$ -ի, 2) $-\frac{1}{2}$ -ի: Գտեք այդ անկյունների մեծությունը 1° -ի ճշտությամբ:

Անկյան կառու-
ցումը յեվ գեներ

18. Կառուցեք այն անկյունները, Վորոնց կոսինուսները հավասար են 1) $\frac{2}{3}$ -ի, 2) $-0,4$ -ի:

19. Կառուցեք այն անկյունները, Վորոնց տանգենսները հավասար են 1) $+1,5$ -ի, 2) -1 -ի:

20. Կառուցեք այն անկյունները, Վորոնց կոտանգենսները հավասար են 1) -2 -ի, 2) $+1$ -ի:

21. x անկյան տված ընդհանուր ձևից գրեցեք նրա 360° -ից, (2π) -ից. փոքր գրական արժեքները:

- | | |
|--|--|
| 1) $x = 15^\circ + 120^\circ \cdot n$ | 2) $x = -60^\circ + 360^\circ \cdot n$ |
| 3) $x = -10^\circ + 60^\circ \cdot n$ | 4) $x = \pm 120^\circ + 720^\circ \cdot n$ |
| 5) $x = \pm \frac{\pi}{6} + \pi \cdot n$ | 6) $x = -\frac{\pi}{4} \pm \frac{\pi}{3} + 2\pi \cdot n$ |
| 7) $x = (-1)^n \cdot 45^\circ + 180^\circ \cdot n$ | 8) $x = (-1)^n \cdot \frac{\pi}{3} \pm \pi \cdot n$ |

22. Գրեցեք հետևյալ հավասարումների ընդհանուր լուծումները՝ անկյունները գտնելով կառուցման և չափման միջոցով (1° -ի մոտավոր ճշտությամբ):

- | | |
|--------------------|----------------------------|
| 1) $\lg x = 2,6$ | 2) $\lg x = -0,8$ |
| 3) $\cos x = 0,9$ | 4) $\cos x = -\frac{2}{3}$ |
| 5) $\sin x = 0,25$ | 6) $\sin x = -\frac{5}{7}$ |

23—31 խնդիրների մեջ պահանջվում է գտնել այն յեռանկյունաչափական ֆունկցիայի արժեքը, Վոր պարունակում է հավասարումը, և կառուցել անկյունները:

- | | |
|---|-------------------------------|
| 23. $\sin^2 x - 3 = 2 \sin x$ | 24. $\cos^2 x + \cos x = 1$ |
| 25. $6 \sin^4 x = 1 - \sin^2 x$ | 26. $\sin^2 x = 2 \sin x$ |
| 27. $\lg^2 x = 2 \lg x$ | 28. $\sec^2 x = 2 \sec x$ |
| 29. $\operatorname{ctg}^3 x + 4 \operatorname{ctg} x = 0$ | 30. $\frac{2}{1 + \lg x} = 0$ |
| 31. $(\cos x - 2) \cdot (2 \operatorname{cosec} x + 1) = 0$ | |

32. Հետևյալ հավասարումներից x -ն արտահայտեցեք հակադարձ շրջանային ֆունկցիաների ոգնությունով:

- 1) $\lg x = m$; 2) $\cos x = m$ և 3) $\sin x = m$
 Ի՞նչ մեծությամբ թիվ կարող եք լինել m -ն այս հավասարումներից յուրաքանչյուրի մեջ:

Հակադարձ օրգանային ֆունկցիաներ

33. Հետևյալ հավասարությունները գրեցեք հակադարձ շրջանային ֆունկցիաների ոգնությունով:

- | | | |
|---|--|--|
| 1) $\sin \frac{\pi}{6} = \frac{1}{2}$ | 2) $\sin(-45^\circ) = -\frac{\sqrt{2}}{2}$ | 3) $\cos \frac{\pi}{4} = \frac{\sqrt{2}}{2}$ |
| 4) $\cos 90^\circ = 0$ | 5) $\operatorname{tg}\left(-\frac{\pi}{4}\right) = -1$ | 6) $\operatorname{tg} 0 = 0$ |
| 7) $\operatorname{ctg} 30^\circ = \sqrt{3}$ | 8) $\operatorname{ctg} 0 = \infty$ | 9) $\sin x = 0,23$ |
| 10) $\cos x = 0,5762$ | 11) $\operatorname{tg} x = 0,468$ | 12) $\operatorname{ctg} x = 1,237$ |

34. Աղյուսակների ոգնությունով արտահայտեցեք աստիճաններով և ռադիաններով:

- | | |
|---------------------------------|------------------------------------|
| 1) $\arcsin 0,7314$ | 2) $\arccos 0,3987$ |
| 3) $\operatorname{arctg} 3,677$ | 4) $\operatorname{arccotg} 0,5117$ |

35. Հետևյալ հավասարումներից գտեք x -ը:

- | | | |
|--------------------------------|--|---|
| 1) $\arcsin x = \frac{\pi}{4}$ | 2) $\arccos x = \frac{\pi}{6}$ | 3) $\operatorname{arctg} x = \frac{\pi}{3}$ |
| 4) $\arcsin \frac{x}{3} = a$ | 5) $\arccos \frac{x}{a} = \frac{b}{c}$ | 6) $\operatorname{arctg} \frac{1}{x} = a$ |

36. Կառուցեք:

- | | | |
|-----------------------------------|---------------------------------------|--|
| 1) $\arcsin 0,8$ | 2) $\arcsin\left(-\frac{1}{3}\right)$ | 3) $\arccos \frac{2}{3}$ |
| 4) $\arccos(-0,75)$ | 5) $\operatorname{arctg} \frac{1}{2}$ | 6) $\operatorname{arctg}(-1,5)$ |
| 7) $\operatorname{arctg} 1,2$ | 8) $\operatorname{arccotg}(-0,6)$ | 9) $\operatorname{arcsec} 1 \frac{1}{2}$ |
| 10) $\operatorname{arccosec}(-2)$ | | |

§ 3. ՄԻՅԵՎՆՈՒՅՆ ԱՆԿՅԱՆ ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶՄՓԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

α անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաներն արտահայտեցեք:

- | | |
|---|--|
| 1. $\sin \alpha$ -ի միջոցով: | 2. $\cos \alpha$ -ի միջոցով: |
| 3. $\operatorname{tg} \alpha$ -ի միջոցով: | 4. $\operatorname{ctg} \alpha$ -ի միջոցով: |

Գտեք α անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաները, լեթե տված է:

- | | | |
|------------------------|-------------------------|--------------------------------|
| 5. $\sin \alpha = 0,8$ | 6. $\sin \alpha = -0,3$ | 7. $\cos \alpha = \frac{2}{3}$ |
|------------------------|-------------------------|--------------------------------|

$$\begin{array}{lll} 8. \cos \alpha = -\frac{3}{5} & 9. \operatorname{tg} \alpha = \sqrt{5} & 10. \operatorname{tg} \alpha = -\frac{9}{40} \\ 11. \operatorname{ctg} \alpha = \frac{8}{15} & 12. \operatorname{ctg} \alpha = -3 & 13. \sec \alpha = 3 \\ 14. \sec \alpha = -1\frac{9}{20} & 15. \operatorname{cosec} \alpha = 2,6 & 16. \operatorname{cosec} \alpha = -\sqrt{3} \end{array}$$

Ընդունելով՝ $0 < b < a$, 17—19-րդ խնդիրները ալկաների ոգնու-
թյամբ գտեք α անկյան յեռանկյունաչափական փունկցիաները:

$$17. \sin \alpha = \frac{a-b}{a+b} \quad 18. \cos \alpha = \frac{\sqrt{a^2-b^2}}{a} \quad 19. \operatorname{tg} \alpha = \frac{a}{b}$$

Գտեք α անկյան յեռանկյունաչափական փունկցիաները, յետե՝

$$\begin{array}{l} 20. \alpha\text{-ն գրական սուր անկյուն է և } \operatorname{tg} \alpha = 4\frac{19}{20} \\ 21. \alpha\text{-ն յեռանկյան անկյուն է և } \cos \alpha = -0,28 \\ 22. \alpha\text{-ն վերջանում է III քառորդում և } \sin \alpha = -\frac{12}{13} \\ 23. \alpha\text{-ն վերջանում է IV քառորդում և } \operatorname{ctg} \alpha = -1,05 \end{array}$$

Պարզեցեք 24—62-րդ խնդիրները արտահայտութիւնները.

$$\begin{array}{ll} 24. 1 - \sin^2 \alpha. & 25. 1 - \cos^2 \alpha. \\ 26. \frac{\sin^2 \alpha}{1 + \cos \alpha}. & 27. \frac{\cos^2 \alpha}{\sin \alpha - 1}. \\ 28. \sin^2 \alpha + \cos^2 \alpha + \operatorname{tg}^2 \alpha. & 29. \sec^2 \alpha - \operatorname{tg}^2 \alpha - \sin^2 \alpha. \\ 30. a) \frac{\sin \alpha \cdot \sin \beta}{\cos \alpha \cdot \cos \beta}; \quad b) \frac{\cos \alpha \cdot \cos \beta}{\sin \alpha \cdot \sin \beta}. & 31. a) \frac{1 - \sin^2 \alpha}{1 - \cos^2 \alpha}; \quad b) \frac{\cos^2 \alpha - 1}{\sin^2 \alpha - 1}. \\ 32. \sin \alpha \cdot \operatorname{ctg} \alpha. & 33. \cos \alpha \cdot \operatorname{tg} \alpha. \quad 34. \operatorname{tg} \alpha \cdot \operatorname{cosec} \alpha. \\ 35. \sin \alpha \cdot \sec \alpha. & 36. \cos \alpha \cdot \operatorname{cosec} \alpha. \quad 37. \operatorname{ctg} \alpha \cdot \sec \alpha. \\ 38. \sin \alpha : \operatorname{tg} \alpha. & 39. \operatorname{tg} \alpha : \operatorname{ctg} \alpha. \\ 40. 1 - \cos^2 \alpha + \sin^2 \alpha. & 41. 1 - \sin^2 \alpha + \operatorname{ctg}^2 \alpha \cdot \sin^2 \alpha. \\ 42. (1 + \operatorname{tg}^2 \alpha) \cdot \cos^2 \alpha. & \\ 43. (\operatorname{tg} \alpha \cdot \cos \alpha)^2 + (\operatorname{ctg} \alpha \cdot \sin \alpha)^2 & 44. (\operatorname{tg} \alpha \cdot \operatorname{cosec} \alpha)^2 - 1. \\ 45. \sin^2 \alpha \cdot \sec^2 \alpha + \sin^2 \alpha + \cos^2 \alpha. & \\ 46. \frac{\sin \alpha \cdot \sin \beta}{\cos \alpha \cdot \cos \beta} \cdot \operatorname{tg} \alpha \cdot \operatorname{ctg} \beta + 1. & 47. \frac{\sin \alpha \cdot \cos \beta}{\cos \alpha \cdot \sin \beta} \cdot \operatorname{ctg} \alpha \cdot \operatorname{ctg} \beta + 1. \\ 48. \frac{1 - \sin^2 \alpha}{1 - \cos^2 \alpha} + \operatorname{tg} \alpha \cdot \operatorname{ctg} \alpha. & \\ 49. \frac{\sin \alpha + \cos \alpha}{\sec \alpha + \operatorname{cosec} \alpha}. & 50. \frac{\operatorname{tg} \alpha + \operatorname{tg} \beta}{\operatorname{ctg} \alpha + \operatorname{ctg} \beta}. \\ 51. (\operatorname{tg} \alpha + \operatorname{ctg} \alpha)^2 - (\operatorname{tg} \alpha - \operatorname{ctg} \alpha)^2. & 52. \frac{\cos^2 \alpha - \operatorname{ctg}^2 \alpha}{\sin^2 \alpha - \operatorname{tg}^2 \alpha}. \\ 53. \sin^2 \alpha - \cos^2 \alpha\text{-ն արտահայտեցեք } a) \sin \alpha\text{-ով և } b) \cos \alpha\text{-ով:} \end{array}$$

$$54. \operatorname{tg} \alpha + \operatorname{ctg} \alpha\text{-ն արտահայտեցեք } \sin \alpha\text{-ով և } \cos \alpha\text{-ով:}$$

$$55. \frac{\operatorname{ctg} \alpha + \operatorname{tg} \alpha}{\operatorname{ctg} \alpha - \operatorname{tg} \alpha}\text{-ն արտահայտեցեք } \operatorname{tg} \alpha\text{-ով:}$$

$$56. \frac{\operatorname{tg} \alpha}{1 - \operatorname{tg}^2 \alpha}\text{-ն արտահայտեցեք } \operatorname{ctg} \alpha\text{-ով:}$$

$$57. \frac{\sin \alpha - \cos \alpha}{\sin \alpha + \cos \alpha}\text{-ն արտահայտեցեք } a) \operatorname{tg} \alpha\text{-ով և } b) \operatorname{ctg} \alpha\text{-ով:}$$

$$58. \frac{\sin \alpha \cdot \cos \alpha}{\cos^2 \alpha - \sin^2 \alpha}\text{-ն արտահայտեցեք } a) \operatorname{tg} \alpha\text{-ով, } b) \operatorname{ctg} \alpha\text{-ով:}$$

$$59. \sec \alpha\text{-ն արտահայտեցեք } \operatorname{ctg} \alpha\text{-ով, յետե } \alpha\text{-ն վերջանում է IV քառորդում:}$$

$$60. \text{Հաշվեցեք } \frac{\sin \alpha + \cos \alpha}{\sin \alpha - \cos \alpha}\text{-ն, յետե } \operatorname{tg} \alpha = \frac{5}{4}.$$

$$61. \text{Վորոշեցեք } \sin \alpha \cdot \cos \alpha\text{-ն, յետե } \sin \alpha + \cos \alpha = m.$$

$$62. \operatorname{tg} \alpha + \operatorname{ctg} \alpha = m; \text{ վորոշեցեք } \operatorname{tg}^2 \alpha + \operatorname{ctg}^2 \alpha\text{-ն և } \operatorname{tg}^3 \alpha + \operatorname{ctg}^3 \alpha\text{-ն:}$$

Ապացուցեք հետևյալ նույնութիւնները (63—92).

$$63. \sin^4 \alpha - \cos^4 \alpha = \sin^2 \alpha - \cos^2 \alpha.$$

$$64. \frac{\sin \alpha}{1 - \cos \alpha} = \frac{1 + \cos \alpha}{\sin \alpha}. \quad 65. \frac{\sec \alpha - 1}{\operatorname{tg} \alpha} = \frac{\operatorname{tg} \alpha}{\sec \alpha + 1}.$$

$$66. \sin^2 \alpha - \sin^2 \beta = \cos^2 \beta - \cos^2 \alpha.$$

$$67. \operatorname{tg}^2 \alpha - \operatorname{ctg}^2 \alpha = \sec^2 \alpha - \operatorname{cosec}^2 \alpha.$$

$$68. \frac{\operatorname{tg}^2 \alpha - \operatorname{ctg}^2 \alpha}{\sin^2 \alpha - \cos^2 \alpha} = \sec^2 \alpha \cdot \operatorname{cosec}^2 \alpha. \quad 69. \frac{\operatorname{tg} \alpha + \operatorname{tg} \beta}{\operatorname{ctg} \alpha + \operatorname{ctg} \beta} = \operatorname{tg} \alpha \cdot \operatorname{tg} \beta.$$

$$70. \frac{\sin \alpha + \cos \alpha}{\sec \alpha + \operatorname{cosec} \alpha} = \sin \alpha \cdot \cos \alpha. \quad 71. \frac{\sin \alpha + \operatorname{ctg} \alpha}{\operatorname{tg} \alpha + \operatorname{cosec} \alpha} = \sin \alpha \cdot \operatorname{ctg} \alpha.$$

$$72. \frac{\sec \alpha \cdot \operatorname{ctg} \alpha - \operatorname{cosec} \alpha \cdot \operatorname{tg} \alpha}{\cos \alpha - \sin \alpha} = \sec \alpha \cdot \operatorname{cosec} \alpha.$$

$$73. \frac{\sin \alpha + \cos \alpha}{\sin \alpha - \cos \alpha} = \frac{\sec \alpha + \operatorname{cosec} \alpha}{\sec \alpha - \operatorname{cosec} \alpha}.$$

$$74. \frac{1 + \sin \alpha}{1 + \cos \alpha} \cdot \frac{1 + \sec \alpha}{1 + \operatorname{cosec} \alpha} = \operatorname{tg} \alpha. \quad 75. \frac{1 - \sin \alpha}{1 - \cos \alpha} : \frac{1 + \sec \alpha}{1 + \operatorname{cosec} \alpha} = \operatorname{ctg}^3 \alpha.$$

$$76. \frac{\operatorname{tg} \alpha}{1 - \operatorname{tg}^2 \alpha} \cdot \frac{\operatorname{ctg}^2 \alpha - 1}{\operatorname{ctg} \alpha} = 1. \quad 77. \frac{1}{1 + \operatorname{tg}^2 \alpha} + \frac{1}{1 + \operatorname{ctg}^2 \alpha} = 1.$$

$$78. \frac{\sin^2 \alpha}{\sec^2 \alpha - 1} + \frac{\cos^2 \alpha}{\operatorname{cosec}^2 \alpha - 1} = 1. \quad 79. \operatorname{cosec} \alpha - \sin \alpha = \cos \alpha \cdot \operatorname{ctg} \alpha.$$

$$80. \operatorname{tg} \alpha + \operatorname{ctg} \alpha = \sec \alpha \cdot \operatorname{cosec} \alpha.$$

$$81. \sec^2 \alpha + \operatorname{cosec}^2 \alpha = \sec^2 \alpha \cdot \operatorname{cosec}^2 \alpha.$$

$$82. \sec^2 \alpha (\operatorname{cosec}^2 \alpha - 1) = \operatorname{cosec}^2 \alpha.$$

$$83. 1 + \sin \alpha + \cos \alpha + \operatorname{tg} \alpha = (1 + \cos \alpha) (1 + \operatorname{tg} \alpha).$$

84. $(\sin \alpha - \operatorname{cosec} \alpha)(\cos \alpha - \sec \alpha) = \sin \alpha \cdot \cos \alpha$.
 85. $(\sin \alpha + \operatorname{tg} \alpha)(\cos \alpha + \operatorname{ctg} \alpha) = (1 + \sin \alpha)(1 + \cos \alpha)$.
 86. $\sin \alpha(1 + \operatorname{tg} \alpha) + \cos \alpha(1 + \operatorname{ctg} \alpha) = \sec \alpha + \operatorname{cosec} \alpha$.
 87. $\sin^3 \alpha(1 + \operatorname{ctg} \alpha) + \cos^3 \alpha(1 + \operatorname{tg} \alpha) = \sin \alpha + \cos \alpha$.
 88. $\operatorname{tg}^3 \alpha \cdot \operatorname{cosec}^2 \alpha - \operatorname{cosec} \alpha \cdot \sec \alpha + \operatorname{ctg}^3 \alpha \cdot \sec^2 \alpha = \operatorname{tg}^3 \alpha + \operatorname{ctg}^3 \alpha$.
 89. $\sec^2 \alpha + \operatorname{cosec}^2 \alpha = (\operatorname{tg} \alpha + \operatorname{ctg} \alpha)^2$.
 90. $\left(\frac{\sin \alpha + \operatorname{tg} \alpha}{\operatorname{cosec} \alpha + \operatorname{ctg} \alpha} \right)^2 = \frac{\sin^2 \alpha + \operatorname{tg}^2 \alpha}{\operatorname{cosec}^2 \alpha + \operatorname{ctg}^2 \alpha}$.
 91. $\operatorname{tg}^2 \alpha - \sin^2 \alpha = \operatorname{tg}^2 \alpha \cdot \sin^2 \alpha$.
 92. $\sqrt{\frac{1 + \sin \alpha}{1 - \sin \alpha}} - \sqrt{\frac{1 - \sin \alpha}{1 + \sin \alpha}} = 2 \operatorname{tg} \alpha$.

Լուծեցեք 93—113 հավասարումները: Հավասարումից գտած ֆունկցիայով կառուցեք անկյունը և փոխադրիչով հափեցեք այդ անկյունը (1° -ի ճշտությամբ): Պատասխանը գրեցեք ընդհանուր տեսքով:

93. $\sin^2 x = 1 + \cos^2 x$.
 94. $\sin x \cdot \operatorname{tg} x = \frac{3}{2}$.
 95. $\sin x = \operatorname{ctg} x$.
 96. $\cos x - 1 + 2 \sin x \cdot \operatorname{tg} x = 0$.
 97. $\sin^2 x + \cos x = 0$.
 98. $\sec x = \operatorname{tg}^2 x$.
 99. $2 \cos^2 x = 3 \sin x + 2$.
 100. $\operatorname{tg} x - \operatorname{stg} x = \frac{3}{2}$.
 101. $\cos x = 2 \operatorname{tg} x$.
 102. $\operatorname{cosec} x - \sin x = \frac{1}{2} \operatorname{ctg} x$.
 103. $2 \operatorname{tg} x = -3 \operatorname{cosec} x$.
 104. $2 \sec x = \operatorname{cosec} x$.
 105. $2 \cos^2 x + 4 \sin^2 x = 3$.
 106. $2(\cos^2 x - \sin^2 x) = 1$.
 107. $\sin^4 x - \cos^4 x = 0,5$.
 108. $1 + \sin x \cos x - \sin x - \cos x = 0$.

Լուծեցեք սինուսի և կոսինուսի վերաբերյալ համասեռ, կամ սինուսի և կոսինուսի վերաբերյալ համասեռ հավասարումի վերածվող հետևյալ հավասարումները:

109. $\sin x = \cos x$.
 110. $\sin x - \sqrt{3} \cos x = 0$.
 111. $3 \sin^2 x = \cos^2 x$.
 112. $\sin^2 x + 2 \sin x \cos x = 3 \cos^2 x$.
 113. $1 - 3 \cos^2 x = 2 \sin x \cos x$.

§ 4. ԼՐԱՅՈՒՑԻՉ ՅԵՎ ՀԱՎԵԼԻՉ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

1. Վերածել 45° -ից փոքր անկյան ֆունկցիայի. 1) $\sin 73^\circ$;
 2) $\cos 80^\circ 40'$; 3) $\operatorname{tg} 69^\circ 25' 40''$; 4) $\operatorname{ctg} 59^\circ 59'$.

Հայեր

2. Վերածել սուր անկյան նույն ֆունկցիաներին. 1) $\sin 112^\circ 20'$;
 2) $\cos 99^\circ 25' 35''$; 3) $\operatorname{tg} 108^\circ 48' 36''$; 4) $\operatorname{ctg} 140^\circ 40'$.

3. Վերածել 45° -ից փոքր անկյան ֆունկցիայի. 1) $\sin 121^\circ 40'$;
 2) $\sin 163^\circ 35'$; 3) $\cos 158^\circ 17'$; 4) $\cos 98^\circ 21'$; 5) $\operatorname{tg} 160^\circ 27' 32''$;
 6) $\operatorname{tg} 106^\circ 32'$; 7) $\operatorname{ctg} 120^\circ 28' 40''$; 8) $\operatorname{ctg} 140^\circ 42'$.

Պարզեցեք հետևյալ արտահայտությունները.

4. $\frac{\operatorname{tg}(180^\circ - \alpha)}{\operatorname{ctg}(90^\circ - \alpha)}$.
 5. $\frac{\cos^2(90^\circ - \alpha) - 1}{\cos(180^\circ - \alpha)}$.
 6. $\sin(\pi - \alpha) \cdot \operatorname{ctg}(\pi - \alpha)$.
 7. $\frac{\operatorname{tg}(\pi - \alpha)}{\cos\left(\frac{\pi}{2} - \alpha\right)}$.

8. $\sin(90^\circ - \alpha) + \sin(90^\circ + \alpha) + 2 \cos(180^\circ - \alpha)$.
 9. $\cos(90^\circ - \alpha) + \cos(90^\circ + \alpha)$.
 10. $\operatorname{tg} 43^\circ \cdot \operatorname{tg} 45^\circ \cdot \operatorname{tg} 47^\circ$.
 11. $\cos(180^\circ - \alpha) \cdot \sin(90^\circ + \alpha) \cdot \operatorname{tg}(180^\circ - \alpha) \cdot \operatorname{ctg}(90^\circ + \alpha)$.

12. $\operatorname{tg}\left(\frac{\pi}{2} + \alpha\right) \cdot \operatorname{ctg}(\pi - \alpha) + \operatorname{ctg}(\pi - \alpha) \cdot \operatorname{tg}\left(\frac{\pi}{2} - \alpha\right)$.

13. $\frac{2 \cos\left(\frac{\pi}{2} - \alpha\right) \sin\left(\frac{\pi}{2} + \alpha\right) \operatorname{tg}(\pi - \alpha)}{\operatorname{ctg}\left(\frac{\pi}{2} + \alpha\right) \sin(\pi - \alpha)}$.

14. $\frac{\operatorname{tg}(180^\circ - \alpha) \cos(180^\circ - \alpha) \operatorname{tg}(90^\circ - \alpha)}{\sin(90^\circ + \alpha) \operatorname{ctg}(90^\circ + \alpha) \operatorname{tg}(90^\circ + \alpha)}$.

15. Ցույց տվեք, Վոր

$\sin(45^\circ + \alpha) = \cos(45^\circ - \alpha)$; $\cos(45^\circ + \alpha) = \sin(45^\circ - \alpha)$ և այլն:

§ 5. ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱՉԱՓԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Բնական յեռանկյունաչափական մեծությունների աղյուսակների ադնությունները գտեք հետևյալ ֆունկցիաների թվային արժեքները.

1. 1) $\sin 15^\circ$; 2) $\sin 45^\circ$; 3) $\sin 60^\circ$; 4) $\sin 73^\circ$;
 5) $\sin 38^\circ 30'$; 6) $\sin 69^\circ 24'$; 7) $\sin 11^\circ 50'$; 8) $\sin 87^\circ 10'$.
 2. 1) $\operatorname{tg} 20^\circ$; 2) $\operatorname{tg} 45^\circ$; 3) $\operatorname{tg} 85^\circ$; 4) $\operatorname{tg} 72^\circ 30'$;
 5) $\operatorname{tg} 17^\circ 42'$; 6) $\operatorname{tg} 53^\circ 13'$; 7) $\operatorname{tg} 20^\circ 48'$; 8) $\operatorname{tg} 83^\circ 7'$;
 9) $\operatorname{tg} 85^\circ 28'$; 10) $\operatorname{tg} 88^\circ 30'$; 11) $\operatorname{tg} 89^\circ 48'$; 12) $\operatorname{tg} 89^\circ 59'$.
 3. 1) $\cos 65^\circ$; 2) $\cos 45^\circ$; 3) $\cos 30^\circ$; 4) $\cos 73^\circ$;
) $\cos 38^\circ 30'$; 6) $\cos 20^\circ 24'$; 7) $\cos 61^\circ 10'$; 8) $\cos 78^\circ 46'$;
 9) $\cos 2^\circ 52'$; 10) $\cos 1^\circ 20'$.

4. 1) $\text{ctg } 20^\circ$; 2) $\text{ctg } 45^\circ$; 3) $\text{ctg } 37^\circ 30'$; 4) $\text{ctg } 71^\circ 24'$;
 5) $\text{ctg } 69^\circ 13'$; 6) $\text{ctg } 19^\circ 37'$; 7) $\text{ctg } 88^\circ 15'$; 8) $\text{ctg } 5^\circ$;
 9) $\text{ctg } 2^\circ 27'$; 10) $\text{ctg } 90^\circ$; 11) $\text{ctg } 1^\circ 53'$.

Գտեք սուր անկյունների մեծությունը նրանց ֆունկցիաների տված արժեքներով.

5. 1) $\sin \alpha = 0,3420$; 2) $\sin \beta = 0,5948$; 3) $\sin \gamma = 0,842$;
 4) $\sin x = 0,9293$; 5) $\sin y = 1,0024$; 6) $\sin z = 0,3932$.
 6. 1) $\text{tg } \alpha = 0,4452$; 2) $\text{tg } \beta = 11,43$; 3) $\text{tg } \gamma = 2,675$;
 4) $\text{tg } x = 0,5452$; 5) $\text{tg } y = 5,558$; 6) $\text{tg } z = 0,5$;
 7) $\text{tg } u = 0,42$; 8) $\text{tg } v = 12,9$; 9) $\text{tg } w = 6,63$;
 7. 1) $\cos \alpha = 0,891$; 2) $\cos \beta = 0,910$; 3) $\cos \gamma = 0,6361$;
 4) $\cos x = 1,0008$; 5) $\cos y = 0,8189$; 6) $\cos z = 0,4485$.
 8. 1) $\text{ctg } \alpha = 2,747$; 2) $\text{ctg } \beta = 0,4142$; 3) $\text{ctg } \gamma = 1,768$;
 4) $\text{ctg } x = 1,4948$; 5) $\text{ctg } y = 0,6946$; 6) $\text{ctg } z = 1,6946$;
 7) $\text{ctg } u = 7,115$; 8) $\text{ctg } v = 10,23$; 9) $\text{ctg } w = 20$.

Աղյուսակներով գտեք բութ անկյունների հետևյալ ֆունկցիաների արժեքները.

9. $\sin 105^\circ$; $\sin 172^\circ 8'$; $\sin 140^\circ 15'$; $\sin 115^\circ 22'$.
 10. $\cos 118^\circ$; $\cos 156^\circ 30'$; $\cos 98^\circ 42'$; $\cos 169^\circ 17'$.
 11. $\text{tg } 121^\circ$; $\text{tg } 160^\circ 24'$; $\text{tg } 101^\circ 41'$; $\text{tg } 147^\circ 39'$.
 12. $\text{ctg } 175^\circ$; $\text{ctg } 124^\circ 30'$; $\text{ctg } 171^\circ 13'$; $\text{ctg } 111^\circ 11'$.

§ 6. Ուղղանկյուն Յեռանկյունների ԼՈՒԾՈՒՄԸ

Նշանակումներ. ABC ուղղանկյուն յեռանկյան մեջ՝ $\angle A = \alpha$, $\angle B = \beta$, $\angle C = 90^\circ$, BC եջը = a, AC եջը = b և ներքնաձիգը՝ AB = c:


1. Տված է ABC ուղղանկյուն յեռանկյունը: Վորոշեցեք՝ 1) $\sin \alpha$ -ն և $\text{tg } \alpha$ -ն, յեթե a = 48 սմ և c = 50 սմ, 2) $\text{tg } \alpha$ -ն և $\cos \alpha$ -ն, յեթե a = 15 մ և b = 20 մ, 3) $\text{tg } \beta$ -ն և $\cos \beta$ -ն, յեթե b = 8,4 սմ և c = 8,5 սմ:

2. ABC ուղղանկյուն յեռանկյան կողմերի յերկարությունները (սանտիմետրներով արտահայտվում են հետևյալ թվերով՝ a = 7 $\frac{1}{5}$ և c = 17: Վորոշեցեք β անկյան բոլոր ֆունկցիաները:

3. ABC ուղղանկյուն յեռանկյան մեջ հաշվեցեք 1) a եջը, յեթե ներքնաձիգը՝ c = 30,6 սմ և $\sin \alpha = \frac{2}{3}$; 2) c-ն, յեթե a = 51 սմ և $\sin \alpha = 0,75$:

4. ABC ուղղանկյուն յեռանկյան մեջ հաշվեցեք a եջը, յեթե՝ 1) b = 14 մ և $\text{tg } \alpha = 0,72$; 2) b = 20,4 դմ և $\text{tg } \alpha = 1,5$:

5. Դիրիժաբլն ընկավ լուսարձակի լույսի շերտի մեջ այն ժամանակ, յերբ լուսարձակի առանցքը հորիզոնի հետ կազմում էր 47° անկյուն: Նույն ժամանակ լուսարձակի հեռավորությունը դիրիժաբլից, ուղիղ գծով, հավասար էր 3,5 կմ-ի: Հաշվեցեք՝ 1) դիրիժաբլի վերելքի բարձրությունը, 2) դիրիժաբլի հորիզոնական հեռավորությունը լուսարձակից:



Գծ. 2

6. Մարտկոցը տեղավորված է 150 մ բարձրություն ունեցող բլրի վրա: Ծովում լողացող թիրախի իջեցման անկյունը մարտկոցից վորոշված է 9° (գծ. 2): Ինչի՞ յ հավասար թիրախի հեռավորությունը մարտկոցից (հորիզոնական ուղղությամբ):

7. Ջրասույզ նավակի պերիսկոպն ամրացից յերևում է 1500 մ հեռավորության վրա: Ամրոցի հրանոթները տեղավորված են ջրի մակերևույթից 330 մ բարձրության վրա: Վորոշեցեք այն անկյունը, վորով պետք է իջեցնել հրանոթի փողը, վոր նա ուղղված լինի նավակի վրա:

8. Ինքնաթիռը մարտկոցին ադդանշան է տալիս, վոր գտնվում է թիրախի ուղիղ վերևը 1700 մ բարձրության վրա (գծ. 3): Նույն մոմենտում մարտկոցի դիտողը գտնում է, վոր ինքնաթիռի բարձրության անկյունը հավասար է 25° -ի: Հաշվեցեք մարտկոցի հեռավորությունը թիրախից (հորիզոնական ուղղությամբ):


9. Դետի լայնությունը վորոշելու համար, նրա մի ափին, անմիջապես ջրի մոտ, անց են կացնում a մետրի հավասար AB բազիսը: Բազիսի A ծայրից, բազիսին ուղղահայաց ուղղության վրա մյուս ափում հենց ջրի մոտ յերևում է C ծառը: Բազիսի մյուս՝ B ծայրից այդ ծառը յերևում է β անկյան տակ: Հաշվեցեք գետի լայնությունը, յեթե a = 42 մ և $\beta = 25^\circ 28'$:

10. Աշտարակի հիմքի կենտրոնից a մետր հեռավորության վրա գտնվող կետից, այդ աշտարակի ծայրը յերևում է բարձրության α

անկյան տակ: Վորոշեցեք աշտարակի բարձրությունը ($a = 86,6$; $\alpha = 22^\circ 17'$),

11. $h = 12$ մ բարձրության վրա գտնվող պատուհանից գետի ափերը յերևում են $\alpha_1 = 17^\circ$ և $\alpha_2 = 45^\circ$ իջեցման անկյունների տակ: Այդ յերկու անկյունները գտնվում են գետի ուղղություն ուղղահայաց միևնույն հարթության մեջ: Վորոշեցեք գետի լայնությունը:

12. Լեռնային յերկաթուղին յուրաքանչյուր 30 մ ճանապարհի վրա բարձրանում է 1 մ: Գտեք վերելքի անկյունը:



Գծ. 3

ուղղաձիգ բարձրացումը հավասար է 37,4 մ-ի: Փողոցի յերկարությունը հավասար է 728 մ-ի: Վորոշեցեք փողոցի վերելքի անկյունը և հորիզոնական պրոյեկցիան:

15. Բլրի գագաթին գտնվում է a մետր յերկարության նշանաձող: Բլրի ստորոտի հորիզոնական հարթության վրա գտնվող և ձողի վերին ծայրից b մետր հեռավորություն ունեցող մի կետից ձողի այդ ծայրը յերևում է հորիզոնի նկատմամբ α անկյան տակ: Վորոշեցեք բլրի բարձրությունը ($a = 2$; $b = 14$; $\alpha = 63^\circ 18'$):

16. Յեթե յերկրի հորիզոնական մակերևույթի վրա ծառերը յենթադրվում է տնկել մեկը մյուսից a մետր հեռավորության վրա, ապա դրան համապատասխան ի՞նչ հեռավորության վրա պետք է տնկել ծառերը բլրի հորիզոնի հետ α անկյուն կազմող լանջի վրա (գծ. 4), ($a = 3,5$; $\alpha = 25^\circ 18'$):

17. MN ուղղի վրա վերցրած է A կետը և այդ կետից տարված է a մետր յերկարություն ունեցող AB հատվածը, վորը MN-ի հետ կազմում է α սուր անկյունը: Վորոշեցեք AB հատվածի (x) պրոյեկցիան MN ուղղի վրա և հետևեցեք այդ պրոյեկցիայի փոփոխություններին, յերբ α անկյունը փոփոխվում է 90° -ից մինչև 0° և ընդհանրապես 0° -ից մինչև 90° :

18. 30 մ բարձրություն ունեցող շենքը 45 մ յերկարության ստվեր է ձգում: Վորոշեցեք արեգակի բարձրությունը:

13. Մարդը բլրի լանջով դեպի վեր 1050 մ անցնելով, բլրի հիմքի հարթությունից բարձրացավ 90 մ: Վորոշեցեք բլրի լանջի թեքության անկյունը (միջին):

14. Հավասարաչափ բարձրացող փողոցի հանութի ժամանակ հաստատված է, վոր այդ փողոցի


160
37

19. Կատրին, յերբ արեգակի բարձրությունը 28° է, գործարանի ծխնելույղը ձգում է 76 մ յերկարության ստվեր: Վորոշեցեք ծխնելույղի բարձրությունը:

20. Ինչքան է արեգակի բարձրությունն այն ժամանակ, 1) յերբ կանգնած մարդու ստվերը հավասար է նրա հասակի կեսին, 2) յերբ ստվերը յերկու անգամ մեծ է նրա հասակից և 3) յերբ ստվերը $2\frac{1}{2}$ անգամ մեծ է նրա հասակից:

21. Ուղղաձիգ ձողի ստվերը փոքր է ձողից նրա յերկարություն $\frac{1}{n}$ -ով: Ինչքան է արեգակի բարձրությունը ($n = 10,5$):

22. T նշանին 2500 մ հեռավորությունից կրակող H հորիցը հրաման ստացավ կրակը փոխադրել S նշանին, վորը T-ից 1500 մ հեռավորության վրա յե գտնվում: Ի՞նչ անկյունով պետք է պտտել հրանոթը, յեթե ST-ն ուղղահայաց է HT-ին:



Գծ. 4

23. Յերկու կետեր միաժամանակ դուրս են գալիս ուղիղ անկյան գագաթից, և շարժվում են հավասարաչափ մեկն անկյան մի կողմով, իսկ մյուսը՝ մյուս կողմով: Առաջինը մեկ վայրկյանում անցնում է a մետր, իսկ յերկրորդը՝ b մետր: Առաջին կետից, այդ կետի շարժման ուղղության նկատմամբ ի՞նչ φ անկյան տակ է յերևում յերկրորդ կետը:


24. Տան քարե սանդուխքն իր յուրաքանչյուր բազկում (այսինքն յերկու պտտման սրահակների միջև) ունի 15-ական աստիճան, ընդվորում յուրաքանչյուր աստիճանի ողտակար լայնությունը (աստիճանի յերեսը) հավասար է $b = 27$ սմ, իսկ աստիճանի բարձրությունը՝ $a = 18$ սմ: Վորոշեցեք այդ սանդուխքի վերելքի անկյունը (գծ. 5):

25. Տան սանդուխքի յուրաքանչյուր աստիճանի լայնությունը հավասար է 25 սմ-ի: Ինչքան պետք է լինի աստիճանի բարձրությունը, վորպեսզի սանդուխքի վերելքի անկյունը հավասար լինի 40° -ի:

26. Յերկու ուղիղ փողոցները հատվում են $51^\circ 50'$ անկյան տակ: Այդ փողոցներից մեկը հատման տեղից 1625 մ հեռավորության վրա պետք է ամենակարճ ճանապարհով միանա յերկրորդի հետ: Վորոշեցեք այդ ամենակարճ նրբանցքի յերկարությունը:

Յեռանկ. խնդ. ժող.—2

27. Շրջանից դուրս գտնվող A կետը տվյալ շրջանի O կենտրոնի հետ միացնող AO հատվածի յերկարությունը հավասար է $c=2,53$ մ,



Գծ 5

A կետից տարված է շրջանագծի AC շոշափողը, վորն AO գծի հետ կազմում է $\alpha=38^\circ 46'$ անկյունը: Վորոշեցեք շառավղի (r) և շոշափողի (x) յերկարությունները:

28. Վորոշեցեք ուղղանկյուն յեռանկյանն արտագծված շրջանի շառավղիը, յեթե այդ յեռանկյան եջերից մեկը հավասար է a դեցիմետրի, իսկ այդ եջի մոտ գտնվող սուր անկյունը՝ β -ի:

Ուղղանկյուն յեռանկյունների լուծման բերվող խրմուրներ

29. Լիսեռնի՝ 6-րդ գծագրի վրա պատկերված կոնային մասի ծնիչն ունի 120° վերելք, այսինքն յուրաքանչյուր 100 մմ բարձրության վրա շառավղիը մեծանում է 12 մմ-ով: Գտեք վերելքի α անկյունը և D տրամագիծը ($h=105$ մմ, $d=80$ մմ):


30. Հատած կոնի մեջ, վորը տված է 6-րդ գծագրի վրա, հայտնի յեն d և D տրամագծերը: Կոնի ծնիչի վերելքը հավասար է $1:n$: Գտեք սկզբնական և վերջնական հարթությունների h հեռավորությունը և վերելքի α անկյունը ($n=20$):

31. 12 մ բարձրություն ունեցող յերկաթուղային լիբը ներքևից ունի 36 մ լայնություն, իսկ վերելքից՝ 6 մ: Հաշվեցեք շիպի թեքությունն անկյունը հորիզոնական հարթության հետ:

32. Յերկաթուղային լիբը վերելքից ունի 6 մ լայնություն, իսկ ներքևից՝ 24 մ: Լիբի կողմնային կողմերը թեքված են դեպի հորիզոնական հարթությունը 35° անկյան տակ: Վորոշեցեք լիբի բարձրությունը:

33. Յերկաթուղային լիբի լծյնական հատվածն ունի հավասարասրուն սեղանի ձև: Այդ լիբը կառուցելիս ոգտագործված է ամենամեծ հնարավոր շիպը՝ $\varphi=39^\circ$: Սեղանի ներքևի հիմքը՝ $a=10$ մ, բարձրությունը՝ $h=3$ մ: Վորոշեցեք սեղանի վերին հիմքը:

34. Հավասարասրուն յեռանկյան b հիմքի և a սրունքի ոգնությունը վորոշեցեք հիմքի անկյունը ($b=28,13$; $a=17,53$):



Գծ 6

35. Հավասարասրուն յեռանկյան բարձրությունը հավասար է h-ի, իսկ հիմքը b-ի: Վորոշեցեք այդ յեռանկյան գագաթի անկյունը ($b=31,26$ և $h=20,75$):

36. Շրջանի շառավղիը հավասար է R-ի: Վորոշեցեք այդ շրջանի մեջ α աստիճան պարունակող աղեղը ձգող լարի յերկարությունը ($R=4,175$; $\alpha=37^\circ 42'$):

37. $R=35,8$ դմ շառավղ ունեցող շրջանի մեջ տարված է $a=28,7$ դմ յերկարության մի լար: Գտեք այդ լարով ձգված աղեղի աստիճանների և բուպենների թիվը և լարի հեռավորությունը կենտրոնից:


38. Լարը հավասար է շրջանի տրամագծի $\frac{3}{4}$ մասին: Վորոշեցեք այդ լարով ձգված աղեղի աստիճանների և բուպենների թիվը:

39. Լարը շրջանագիծը բաժանում է յերկու այնպիսի մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես $m:n$: Շրջանագծի յերկարությունը հավասար է c մետրի: Վորոշեցեք լարի հեռավորությունը կենտրոնից ($m:n=3:7$; $c=120$):

40. Շրջանագծին ներգծված α անկյունը հենվում է a սանտիմետր յերկարություն ունեցող լարի վրա: Վորոշեցեք շրջանի շառավղիը:

41. Տված են իրար փոխուղղահայաց յերկու ուժեր $P=4,372$ կգ և $Q=5,645$ կգ: Ի՞նչ անկյուն է կազմում համադրող P ուժի հետ և ինչքան է նրա մեծությունը:


42. Հավասարասրուն յեռանկյան հիմքը հավասար է b դեցիմետրի, իսկ հիմքի անկյունը՝ α -ի: Վորոշեցեք այդ յեռանկյան պարագիծը:



Գծ 7

43. Հավասարասրուն յեռանկյան հիմքը հավասար է b դեցիմետրի, իսկ սրունքի վրա իջեցրած բարձրությունը՝ h դեցիմետրի: Վորոշեցեք յեռանկյան հիմքին առնթեր x անկյունը:

44. 7-րդ գծագրի վրա նկարված է մի փորակ: Վորոշեցեք այդ փորակի թեքությունն α անկյունը դեպի հիմքը:



Գծ 8

45. 8-րդ գծագրի վրա ցույց է տրված հրանոթային փականի հատուկ պոտտակային պարույրը: Վորոշեցեք α անկյունը:

46. A, B և C վայրերը դասավորված են ափսոսաբար, վոր նրանց հեռավորությունները քարտեզի վրա արտահայտվում են հետևյալ թվերով:

$$AB = 0,85 \text{ դմ},$$

$$AC = 1,20 \text{ դմ},$$

$$BC = 1,20 \text{ դմ},$$

B վայրը գտնվում է A-ից ուղիղ դեպի հյուսիս: Վորոշեցեք A-ից C ուղղությունը:

47. Ուղղագիծ լծակի բազուկների յերկարությունները հավասար են 5 դմ-ի և 15 դմ-ի: Գտնի՞ր դիմադրող կրթարանա (ուղղաձիգ ուղղություն) լծակի յուրաքանչյուր ծայրը, յեթե լծակը հորիզոնական դիրքից թեքվում է՝ 1) 40° , 2) 60° և 3) 90° :

48. Նավը շարժվել է հետևյալ ձևով:

Ուղղությունը	Անցած հանապարհը կմ-ներով
23° Հս. Արևելք	10
27° Հս. Արևելք	13
82° Հս. Արևելք	15

Վորոշեցեք այն հեռավորությունները, վոր անցել է նավը իր մեկնման կետից դեպի արևելք և դեպի հյուսիս:

49. Ուղղանկյան կողմերը հավասար են a-ի և b-ի: Վորոշեցեք այն անկյունները, վոր անկյունագծերը կազմում են կողմերի հետ ($a = 75,2$ դմ; $b = 63,6$ դմ):

50. Ուղղանկյան կողմերը հավասար են a-ի և b-ի: Հաշվեցեք անկյունագծերով կազմված անկյունը ($a = 13,5$ դմ; $b = 7,4$ դմ):

51. Ուղղանկյան կողմերը հավասար են a սմ-ի և b սմ-ի: Այդ ուղղանկյան կողմերի միջնակետերը հանդիսանում են քառանկյան գագաթներ: Վորոշեցեք այն անկյունները, վոր այդ քառանկյան կողմերը կազմում են տված ուղղանկյան կողմերի հետ ($a = 23,76$; $b = 58,28$):

52. Շեղանկյան անկյունագծերը հավասար են d_1 սմ-ի և d_2 սմ-ի ($d_1 = 28$; $d_2 = 49$): Հաշվեցեք այդ շեղանկյան անկյունները:

53. 1) AP-ն (գծ. 9) շարժիչի շարժաթևն է և OA-ն՝ նրա շուռտվիկը: Վորոշեցեք OB-ի և AB-ի յերկարությունները, յեթե

$$OA = r = 0,4 \text{ մ},$$

իսկ $\alpha = 30^\circ$: Անուհետև հաշվեցեք APB անկյունը և շարժաթևի PB

ալրոյեկցիայի յերկարությունը (OP ուղղորդի վրա), դիտենալով, վոր շարժաթևի յերկարությունը՝ $l = 2$ մ:

2) Ապացուցեք, վոր շարժաթևի և շուռտվիկի հորիզոնական հարթության հետ կազմած α և β անկյունների միջև գոյություն ունի հետևյալ առնչությունը:

$$\sin \beta = \frac{r}{l} \sin \alpha$$

3) Գտեք α անկյան զանազան արժեքների դեպքում β անկյան համապատասխան արժեքները, յերբ $\frac{r}{l} = \frac{1}{5}$ ($\alpha = 0^\circ; 10^\circ; 20^\circ; 30^\circ; 40^\circ; 50^\circ; 60^\circ; 70^\circ; 80^\circ; 90^\circ$):


4) Ինչո՞ւ համար $\alpha = 90^\circ$ դեպքում β անկյունն (այս ինդերի յերկրորդ կետի բանաձևի մեջ) ունի ամենամեծ արժեքը:

5) Ինչո՞ւ յե հավասար β անկյունն այն դեպքում, յերբ շարժաթևն ու շուռտվիկը փոխուղղահայաց են:

6) Դիցուք, յերբ $\alpha = 0$, P կետը գրավում է Q դիրքը: Ցույց տվեք, վոր շարժաթևի գլխի QP = x տեղափոխությունը կարելի յե հաշվել՝

$$x = r(1 - \cos \alpha) + l(3 - \cos \beta)$$

բանաձևով:



Գծ. 10

Հաշվեցեք x-ի մեծությունը, յերբ $\alpha = 0^\circ; 10^\circ; 20^\circ; 30^\circ; 40^\circ; 50^\circ; 60^\circ; 70^\circ; 80^\circ; 90^\circ$, յեթե շուռտվիկի յերկարությունը՝ $r = 300$ մմ, իսկ շարժաթևի յերկարությունը՝ $l = 1500$ մմ:


54. Տված է r սանտիմետր յերկարության շառավիղ ունեցող մի շրջան: Կենտրոնից a սանտիմետր հեռավորության վրա գտնվող կետից անց է կացրած յերկու շոշափող: Վորոշեցեք այդ շոշափողներով կազմված անկյունը ($r = 3,35$; $a = 8,32$):

55. Յերկու շրջանների կենտրոնները միացնող գծի յերկարու-թյունը հավասար է d սանտիմետրի (գծ. 10), շառավիղները՝ R և r սանտիմետրի: Վորոշեցեք այն α և β անկյունները, վոր այդ շրջանների ներքին և արտաքին ընդհանուր շոշափողները կազմում են կենտրոնները միացնող գծի հետ ($R = 3,065$; $r = 1,007$; $d = 6,245$):

56. Շրջանագծի շառավիղը հավասար է 5 դմ-ի: Այդ շրջանագծի վորեւէ A կետից տարված է յերկու լար, վորոնց յերկարություններն են՝ 7 դմ և 8 դմ: Հաշվեցեք այդ լարերով կազմված անկյունը: Քննարկեցեք յերկու դեպք. 1) յերբ լարերը գտնվում են A կետից տարած AO շառավղի տարբեր կողմերում և 2) յերբ լարերը գտնվում են այդ շառավղի մի կողմում:

57. Հավասարասրուն յեռանկյան մեջ բարձրությունը հավասար է h դեցիմետրի, իսկ կողմնային բարձրությունը h_1 դեցիմետրի: Վորոշեցեք յեռանկյան հիմքի անկյունը ($h = 2,5$; $h_1 = 3$):

58. Հավասարասրուն յեռանկյան սրունքը հավասար է a սանտիմետրի, իսկ գագաթի անկյունը՝ β -ի: Վորոշեցեք արտագծած և ներգծած շրջանների R և r շառավիղները:



Գծ. 11

59. Ուղղանկյուն յեռանկյան եջերից մեկը հավասար է b մետրի, իսկ ուղիղ անկյան գագաթից ներքնաձիգի վրա իջեցրած ուղղահայացը՝ h մետրի: Վորոշեցեք այդ ուղղանկյուն յեռանկյան սուր անկյուններից մեկը և ապա մյուս եջը (a -ն) և ներքնաձիգը (c -ն):

60. Վորոշեցեք 11-րդ նկարում ցույց տրված անվակալի կոնի ծնիչների միջև կազմված անկյունը:

61. Վորոշեցեք հետևյալ հատած կոնների ծնիչների միջև կազմված անկյունները (1° -ի ճշտությամբ):

Մեծ տրամագիծը մմ-ով	50	75	75	75	100	100
Փոքր » »	25	25	50	50	25	25
Կոնի յերկարությունը մմ-ով	50	75	75	25	40	25


62. Յերկրագնդի տրամագիծը հավասար է 12740 կմ-ի: Վորոշեցեք φ° լայնության վրա գտնվող վայրից անցնող զուգահեռականի շրջանագծի յերկարությունը ($\varphi = 57^\circ 4' 33''$):

63. Անտառի վրայով կրակելու համար բարձրացման ինչ α անկյուն պետք է տալ հրանոթին, յիթե ծառերի ծայրերը 15 մ-ով բարձր են հրանոթի մակարդակից, և անտառը հրանոթից 200 մ հեռավորու-

թյան վրա չե գտնվում: Հաշվումներ կատարելիս ծածկողի բարձրությանը (տվյալ դեպքում անտառի) սովորաբար ավելացնում են դիտանցիայի 0,01 մասը (տվյալ դեպքում դիտանցիան 200 մ է):

64. Հրանոթը նպատակակետի հետ միացնող գիծը հորիզոնի հետ կազմում է այսպես կոչված նպատակակետի տեղանքի անկյուն: Հաշվեցեք տեղանքի անկյունը հրանոթի մակարդակից 65 մ բարձրության վրա գտնվող նպատակակետի վրա կրակելիս, յիթե հրանոթի և նպատակակետի հեռավորությունը $\frac{1}{10000}$ մասշտաբ ունեցող քարտեզի վրա հավասար է 31,5 սմ-ի:

65. A և B կետերի հեռավորությունը հավասար է 15 սմ-ի: Այդ կետերի առաջ դրված է մի հայելի, վորն առաջին կետից ունի $a = 5$ սմ հեռա-



Գծ. 12

վորություն, իսկ յերկրորդից՝ $b = 7$ սմ: Ինչի՞ յե հավասար այն ճառագայթի անկման անկյունը, վորը դուրս է գալիս A -ից և անդրադառնալով անցնում է B կետով:

§ 7. ՇԵՂԱՆԿՅՈՒՆ ՅԵՌԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ


Միջուկների
քննարկը

1. Կուճեցեք յեռանկյունը հետևյալ տվյալների ոգնությամբ:


$$1) a = 109; \quad \beta = 33^\circ 24'; \quad \gamma = 66^\circ 59';$$

$$2) c = 16; \quad \alpha = 143^\circ 8'; \quad \beta = 22^\circ 37'$$

2. Պահանջվում է վորոշել A գործարանի հեռավորությունը գետի մյուս կողմում գտնվող յերկաթուղային B կայարանից (գծ. 13): Հայտնի յե, վոր՝ $AC = 100$ մ; $\angle BAC = 74^\circ$; $\angle BCA = 44^\circ$:




Գծ. 13



Գծ. 14

3. Մի գործարանի ծխնեղույղի (վորի հիմքին մոտենալը հնարավոր չէ) բարձրությունը վորոշելու համար չափել են $AC = 11,0$ մ բազիսը, վորի շարունակությունն անցնում է ծխնեղույղի հիմքով (գծ. 14). $\angle BAD = 49^\circ$; $\angle BCD = 35^\circ$: Անկյունաչափական գործիքի բարձրությունը հավասար է $1,37$ մ-ի: Ինչի՞նչ յե հավասար ծխնեղույղի բարձրությունը:

4. AB ուղղաձիգ առարկայի բարձրությունը վորոշելու համար, այդ առարկայի A հիմքից տարված է AC բազիսը, վորի յերկարությունը հավասար է b մետրի: AC բազիսը A -ից C բարձրանում է հորիզոնի հարթության հետ կազմելով α° անկյուն (գծ. 15): Բազիսի C ծայրից առարկայի գագաթը յերևում է բարձրության β° անկյան տակ: Վորոշեցե՞ք առարկայի բարձրությունը:



Գծ. 15

5. Սարի լանջը իջնում է դեպի հորիզոնը β° անկյան տակ: Այդ սարի վրա կա մի ծառ, վորի ստվերն ընկնում է սարի լանջին դեպի ներքև և արեգակի α° բարձրության ժամանակ ունի l մետր յերկարություն: Վորոշեցե՞ք ծառի բարձրությունը:

6. Զուգահեռագծի անկյունագծերից մեկը հավասար է d մետրի և բաժանում է այդ զուգահեռագծի ան-

կյունը α° և β° մասերին: Վորոշեցե՞ք զուգահեռագծի կողմերը:

7. Յեռանկյան մեջ տված է a կողմը և այդ կողմին առնթեր յերկու անկյունները՝ β° և γ° : Վորոշեցե՞ք յեռանկյան բոլոր անկյունների կիսորդները՝ l_a , l_b , l_c :

8. Գետի լայնությունը վորոշելու համար նրա ափին, անմիջապես ջրի մոտ անց են կացրել c յերկարությամբ AB բազիսը և մյուս ափին, անմիջապես ջրի մոտ, նշան են արել C ծառը: Անուհետև չափել են $\angle CAB = \alpha^\circ$ և $\angle ABC = \beta^\circ$: Վորոշեցե՞ք գետի լայնությունը C ծառի դիմաց ($c = 400$; $\alpha = 45^\circ$; $\beta = 30^\circ$):

9. ABC յեռանկյան մեջ տրված են՝ $\angle A = \alpha^\circ$; $\angle C = \gamma^\circ$ և բարձրությունը՝ $AD = h_a$ մետրի: Վորոշեցե՞ք այդ յեռանկյան կողմերի յերկարությունները:

10. ABC յեռանկյան մակերեսը վորոշելու համար չափել են այդ յեռանկյան a և b կողմերն ու դրանցով կազմված γ անկյունը: Հաշվեցե՞ք այդ յեռանկյան մակերեսը ($a = 125$ մ; $b = 160$ մ; $\gamma = 52^\circ$):

Յեռանկյան մակերեսը

11. Հավասարասրուն յեռանկյան մեջ սրունքը հավասար է b -ի,

իսկ գագաթի անկյունը՝ α -ի: Վորոշեցե՞ք այդ յեռանկյան մակերեսը ($b = 10$ մ; $\alpha = 75^\circ 20'$):

12. Յեթե յեռանկյան a և b կողմերի յերկարությունները մնան հաստատուն, իսկ այդ կողմերով կազմված γ անկյունը փոփոխվի 0 -ից մինչև 180° սահմաններում, ապա γ -ի վրա արժեքի դեպքում յեռանկյան մակերեսը կլինի ամենամեծ:

13. Ապացուցե՞ք, վոր զուգահեռագծի մակերեսը հավասար է նրա յերկու հարևան կողմերի արտադրյալը բազմապատկած այդ կողմերով կազմված անկյան սինուսով:

14. Ապացուցե՞ք, վոր յուրաքանչյուր քառանկյան մակերեսը հավասար է նրա յերկու անկյունագծերի արտադրյալի կեսը բազմապատկած այդ անկյունագծերով կազմված անկյան սինուսով:

15. Շեղանկյան կողմը հավասար է a -ի, իսկ անկյուններից մեկը α -ի: Վորոշեցե՞ք այդ շեղանկյան մակերեսը ($a = 7,5$ սմ; $\alpha = 22^\circ 10'$):

16. Ուղղանկյան անկյունագծերը հավասար է d -ի, իսկ անկյունագծերով կազմված անկյունը՝ φ -ի: Վորոշեցե՞ք այդ ուղղանկյան Q մակերեսը: Վորոշեցե՞ք Q -ի մաքսիմում արժեքը, յերբ φ -ն փոփոխվում է 0 -ից մինչև 180° :

17. Մի սեղանի հիմքերն են՝ a և b , կողմնալին կողմը՝ c , այդ կողմին առնթեր անկյունը՝ α : Վորոշեցե՞ք սեղանի մակերեսը:

18. Մի զուգահեռագծի մակերեսը հավասար է 12 դմ², այդ զուգահեռագծի կողմերը՝ $a = 3,7$ դմ և $b = 4,2$ դմ: Վորոշեցե՞ք զուգահեռագծի անկյունները:

19. Մի յեռանկյան մակերեսը հավասար է $71,24$ սմ²-ի, այդ յեռանկյան կողմերը՝ $a = 15$ սմ և $b = 13$ սմ: Վորոշեցե՞ք այդ կողմերով կազմված անկյունը:

20. Վորոշեցե՞ք յեռանկյան Δ և ունեցող հողամասի մակերեսը, յեթե այդ յեռանկյան կողմերից մեկը հավասար է c -ի, իսկ մյուս կողմերն առաջինի հետ կազմում են α և β անկյունները ($c = 20$; $\alpha = 65^\circ 30'$; $\beta = 84^\circ 30'$):

21. Անտառամասի ուղղագիծ սահմաններից յերկուսը զուգամիտվում են $BAC = \alpha$ անկյան տակ: Պահանջվում է այդ անտառամասից անջատել Q քառակուսի մետր մեծությու ունեցող DAE մակերեսը, դեպի AC կողմը $AED = \gamma$ անկյան տակ թեքված DE ուղղի ողնությունով: Այդպիսի ուղիղ հեշտ կլինի անցկացնել, յեթե հայտնի լինեն AE և AD կողմերը: Վորոշեցե՞ք այդ կողմերի յերկարությունները:

22. ABC յեռանկյան մեջ տված են՝ $\angle C = \gamma$ և A ու B գագաթներից անցկացրած h_a և h_b բարձրությունները: Վորոշեցե՞ք յեռանկյան մակերեսը:

23. Վորոշեցեք յեռանկյան մակերեսը յեթե հայտնի չեն α և β անկյուններն ու h_a բարձրությունը:

Խոսքնումների
քննարկ

24. ABC յեռանկյան մեջ տված են $b=7$; $c=10$; $\alpha=56^\circ 29'$: Գտեք a կողմը:


25. Լուծեցեք ABC յեռանկյունը հետևյալ տվյալներով.

$$1) a=10; \quad b=15; \quad \gamma=123^\circ 17'$$

$$2) a=0,2; \quad c=0,6; \quad \beta=23^\circ 28'$$

$$3) c=40; \quad a=100; \quad \beta=16^\circ 28'$$

26. A և B կետերի հեռավորությունը վորոշելու համար ընտրված է յերրորդ C կետն ախպես, վոր նրանից յերեան և մատչելի լինեն A և B կետերը (A կետից B-ն ուղիղ գծով անցնել հնարավոր չէ): Այնուհետև չափված են $BC=a$, $AC=b$ հե-



Գծ. 16


հեռավորությունները և $ACB=\gamma$ անկյունը (գծ. 16): Հաշվեցեք AB-ն ($a=100$ մ; $b=80$ մ; $\gamma=48^\circ 57'$):

27. ABC յեռանկյան մեջ տված են $a=3$, $b=4$, $c=6$ կողմերը: Գտեք γ անկյունը:

28. Չուգահեռագծի կողմերը հավասար են 4,0 մ-ի և 5,0 մ-ի: Այդ չուգահեռագծի անկյուններից մեկը հավասար է 52° -ի: Գտեք յերկու անկյունագծերը:

29. Նյութական կետին գործող զորած $P=100$ կգ և $Q=200$ կգ ուժերն իրար հետ կազմում են $\alpha=50^\circ$ անկյուն: Վորոշեցեք համազորի R մեծությունը և այն անկյունները, վոր համազորը կազմում է P և Q ուժերի հետ:

30. Յերկու (A և B) անմատչելի կետերի հեռավորությունը վորոշելու համար չափել են CD բազիսը, վոր հավասար է a մետրի և չի անցնում A և B կետերի միջով: Չափել են նաև $ACD=\gamma$, $BCD=\alpha$, $ADC=\beta$ և $BDC=\delta$ անկյունները: Հաշվեցեք AB-ն, յեթե $a=2000$; $\alpha=52^\circ 40'$; $\beta=42^\circ 1'$; $\gamma=86^\circ 40'$; $\delta=81^\circ 15'$:



Գծ. 17

§ 8. ՎԵՐԱԾՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԵՐ

1. a) $162^\circ 30'$; b) 230° ; c) 335° անկյունների սինուսները, կոսինուսները, տանգենսներն ու կոտանգենսները վերածեցեք սուր անկյան միեվնույն ֆունկցիաներին:

2. a) $25^\circ 30' 20''$; b) 130° ; c) 250° ; d) 340°

անկյունների սինուսները, կոսինուսները, տանգենսներն ու կոտանգենսները փոխարինեցեք սուր անկյան նմանանուն ֆունկցիաներով:

3. a) 75° ; b) 150° ; c) 200° ; d) 315°

անկյունների յեռանկյունաչափական ֆունկցիաները փոխարինեցեք այնպես, վոր անկյունը 45° -ից մեծ չլինի:

Վերածեցեք ամենափոքր դրական արգումենտի.

4. a) $\sin 2000^\circ$; b) $\sin(-1000^\circ)$; c) $\cos 1500^\circ$; d) $\cos(-2900^\circ)$.

5. e) $\operatorname{tg} 600^\circ$; f) $\operatorname{tg}(-40^\circ)$; g) $\operatorname{ctg} 1305^\circ$; h) $\operatorname{ctg}(-300^\circ)$.

6. i) $\sec 1900^\circ$; k) $\sec(-2150^\circ)$; l) $\operatorname{cosec} 500^\circ$; m) $\operatorname{cosec}(-80^\circ)$.

7. a) $\sin(-7,3\pi)$; b) $\cos \frac{34}{9}\pi$; c) $\operatorname{tg}(-\frac{79}{11}\pi)$; d) $\operatorname{cosec}(-0,6\pi)$.

Հաշվեցեք.

8. a) $\sin(-1350^\circ)$; b) $\cos 720^\circ$; c) $\operatorname{tg} 900^\circ$; d) $\operatorname{ctg}(-450^\circ)$.

9. a) $\sin \frac{19}{6}\pi$; b) $\cos \frac{11}{2}\pi$; c) $\operatorname{ctg} \frac{16}{3}\pi$; d) $\sec 9\pi$.

10. 50° անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաներն արտահայտեցեք այդ անկյանը կից անկյան ֆունկցիաներով:

Պարզեցեք արտահայտությունները ($11-21$ խնդիրների մեջ).

11. $\sin(90^\circ + \alpha) + \cos(180^\circ - \alpha) + \operatorname{tg}(270^\circ + \alpha) + \operatorname{ctg}(360^\circ - \alpha)$.

12. $\sin(\frac{\pi}{2} - \alpha) - \cos(\pi - \alpha) + \operatorname{tg}(\pi - \alpha) - \operatorname{ctg}(\frac{3\pi}{2} + \alpha)$.

13. $\sin^2(270^\circ - \alpha) + \sin^2(360^\circ - \alpha)$. 14. $\operatorname{tg}(\frac{3\pi}{2} - \alpha) \cdot \operatorname{tg}(2\pi - \alpha)$.

15. $a^2 + b^2 + 2ab \cdot \cos(180^\circ - \alpha)$. 16. $\frac{\sin(-\alpha) \cdot \operatorname{tg}(-\alpha)}{\cos(-\alpha) \cdot \operatorname{ctg}(-\alpha)}$.

17. $\frac{\operatorname{cosec}(-\alpha) \cdot \operatorname{cosec}(90^\circ + \alpha)}{\sec(-\alpha) \cdot \sec(180^\circ + \alpha)}$. 18. $\frac{\sin(\pi + \alpha) \cdot \sec(\frac{3\pi}{2} + \alpha)}{\operatorname{tg}(\pi - \alpha) \cdot \sec(2\pi - \alpha)}$.

19. $\sin 160^\circ \cdot \cos 110^\circ + \sin 250^\circ \cdot \cos 340^\circ + \operatorname{tg} 110^\circ \cdot \operatorname{tg} 340^\circ$.

20. $\frac{\sin(90^\circ - \alpha) \cdot \operatorname{tg} 132^\circ \cdot \operatorname{cosec} 222^\circ \cdot \sin 90^\circ}{\cos(180^\circ + \alpha) \cdot \sec 312^\circ \cdot \operatorname{ctg} 48^\circ \cdot \cos 180^\circ}$.

21. $\frac{\operatorname{tg}(270^\circ - \alpha) \cdot \sin 130^\circ \cdot \operatorname{cosec} 220^\circ \cdot \sin 270^\circ}{\operatorname{ctg}(180^\circ - \alpha) \cdot \cos 50^\circ \cdot \sec 320^\circ \cdot \cos 360^\circ}$.

22. Ձևափոխեցե՛ք հետևյալ անկյունների յեռանկյունաչափական ֆունկցիաները.

a) $\alpha - 90^\circ$; b) $\alpha - 180^\circ$; c) $\alpha - 270^\circ$; d) $\alpha - 360^\circ$

23. Վերոշեցե՛ք $\cos x$ -ը

$$3 \sin^2(360^\circ - x) - 7 \sin(x - 90^\circ) + 3 = 0$$

հավասարումից:

24. Վերոշեցե՛ք $\sin x$ -ը, յեթե՝

$$\sin\left(x - \frac{\pi}{2}\right) + \sin \frac{\pi}{2} = \sin\left(x + \frac{\pi}{2}\right):$$

25. Վերոշեցե՛ք $\operatorname{tg} x$ -ը

$$\sin(2\pi - x) \cos(\pi - x) + \sin^2\left(\frac{3}{2}\pi - x\right) - \sin^2(2\pi - x) = 0$$

հավասարումից:

Հոլձեցե՛ք հավասարումները (26—30 խնդիրներում).

26. $\sin^2(270^\circ - x) + 2\cos(360^\circ - x) = 3$

27. $\sin(x - 90^\circ) = -\sin(x - 180^\circ)$

28. $\cos(\pi + x) = -\cos\left(\frac{\pi}{2} - x\right)$

29. $\operatorname{tg}(x + \pi) = \operatorname{tg}\left(\frac{\pi}{2} - x\right)$

30. $\sin(x + 90^\circ) = -\operatorname{ctg}(360^\circ - x)$

§ 9. ԳՈՒՄԱՐՄԱՆ ԹԵՈՐԵՄԸ

Գումարի յեվ տարբերության սինուսն ու կոսինուսը

1. Հաշվեցե՛ք՝ $\cos(\alpha + \beta) - \cos(\alpha - \beta)$, յեթե $\sin \alpha = 0,625$ և $\sin \beta = 0,8$:

2. Վերլուծե՛լ և պարզե՛լ՝

a) $\sin(\alpha + 60^\circ) + \sin(\alpha - 60^\circ)$

b) $\cos(30^\circ + \alpha) - \cos(30^\circ - \alpha)$

32. $\arcsin(1+x) + \arcsin(1-x) = \frac{\pi}{4}$.

33. $\arcsin(x-1) = 2 \arcsin x$. 34. $\arcsin x = 2 \arcsin \frac{1}{x}$.

35. $\arcsin \frac{x}{2} = 2 \arcsin(x-1)$. 36. $\arcsin 2x = 3 \arcsin x$.

37. $x = \arcsin(\cos x)$. 38. $2x = \arcsin(\tan x)$.

39. $\arcsin x + \arcsin \frac{x}{2} = \frac{\pi}{4}$. 40. $\arcsin x + \arcsin x \sqrt{3} = \frac{\pi}{2}$.

41. $\arcsin x + \arcsin(1-x) = \arcsin(-x)$.

42. $\arcsin x + \arcsin 3x = \frac{\pi}{2}$.

43. $\arcsin \frac{1}{x-1} - \arcsin \frac{1}{x+1} = \arcsin a$.

44. $\arcsin x + \frac{1}{2} \arcsin 5x = \frac{\pi}{4}$.

ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՁՈՂ
ՅԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

§ 15*ա. ՀԱՐԹԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

Կանոնավոր
քաղմանկյուններ

1*. Ներգծած կանոնավոր n -անկյան տված a կողմի ոգնությունը հաշվեցեք արտագծած կանոնավոր n -անկյան b կողմը:

2*. Հաշվեցեք կանոնավոր 7-անկյան անկյունագծերի յերկարությունը, յեթե այդ 7-անկյան կողմը հավասար է 10 սմ-ի:

3*. Վորոշեցեք a սմ յերկարության կողմ ունեցող կանոնավոր n -անկյան ամենափոքր անկյունագիծը:

4*. Վորոշեցեք a սմ յերկարության կողմ ունեցող կանոնավոր n -անկյան ամենամեծ անկյունագծի յերկարությունը, յերկու դեպքի համար. 1) n -ը զույգ թիվ է, 2) n -ը կենտ թիվ է:

Ուղղագիծ պատկերների մակերեսներ

5*. Ուղղանկյան անկյունագծերը հատվում են $75^\circ 22'$ անկյան տակ. այդ ուղղանկյան մակերեսը հավասար է 562 մ²: Վորոշեցեք ուղղանկյան կողմերը:

6*. Ի շառավիղն ունեցող շրջանին արտագծված է մի շեղանկյուն, վորի սուր անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք այդ շեղանկյան մակերեսը ($r=5$; $\alpha=36^\circ 47'$):

7*. Հավասարասրուն յեռանկյան մակերեսը հավասար է Q -ի, գագաթի անկյունը՝ β -ի: Վորոշեցեք այդ յեռանկյան բարձրությունը ($Q=450$; $\beta=73^\circ$):

8*. Հավասարասրուն յեռանկյան մակերեսը հավասար է Q մ²-ի, իսկ հիմքը՝ b մ-ի: Վորոշեցեք գագաթի անկյունը ($Q=1956$; $b=130,7$):

9*. Վորոշեցեք կանոնավոր n -անկյան մակերեսը, յեթե նրա կողմը հավասար է a դմ-ի. 1) $n=7$; $a=20$; 2) $n=8$; $a=1$; 3) $n=12$; $a=10$:

10*. Հաշվեցեք R շառավիղն ունեցող շրջանին ներգծած կանոնավոր n -անկյան մակերեսը.

1) $n=12$; $R=7$; 2) $n=5$; $R=7$:

11*. Հաշվեցեք R շառավիղն ունեցող շրջանին արտագծած կանոնավոր n -անկյան մակերեսը:

12*. Սեղանի հիմքերը հավասար են 25 սմ-ի և 15 սմ-ի: Կողմնային կողմը հավասար է 12 սմ-ի: Կողմնային կողմի և մեծ հիմքի միջև կազմված անկյունը հավասար է 50° -ի: Հաշվեցեք այդ սեղանի մակերեսը:

13*. Հնգանկյուն հողամասը չափել են այսպես կոչված բևեռային յեղանակով (գծ. 18): O կետից (բևեռ) չափել են $OA=43$ մ, $OB=36$ մ, $OC=41$ մ, $OD=56$ մ և $OE=34$ մ հեռավորությունները և $AOB=65^\circ 30'$; $BOC=71^\circ 20'$; $COD=80^\circ$ և $DOE=61^\circ 35'$ անկյունները: Հաշվեցեք այդ հողամասի մակերեսը:

14*. Վորոշեցեք հավասարասրուն սեղանի մակերեսը, յեթե նրա անկյունագիծը հավասար է a -ի և հիմքերի հետ կազմում է α անկյունը:

15*. Կանոնավոր վեցանկյան կողմը հավասար է 84 սմ-ի: Հաշվեցեք այդ վեցանկյան հավասարամեծ կանոնավոր 7-անկյան կողմը:

16*. Կանոնավոր 9-անկյունը և կանոնավոր 10-անկյունը հավասար պարագծեր ունեն: Վորոշեցեք ինչպես են հարաբերում նրանց մակերեսները:

Երջանի մասերի
մակերեսներ


17*. Հաշվեցեք սեկտորի մակերեսը, յեթե նրա շառավիղը հավասար է 8 սմ-ի, իսկ նրան ներգծած շրջանի շառավիղը հավասար է 2 սմ-ի:

18*. Վորոշեցեք սեգմենտի մակերեսը, յեթե նրա շառավիղը հավասար է r -ի և աղեղը՝ α -ի. 1) $r=4,731$; $\alpha=46^\circ 44'$; 2) $r=12$; $\alpha=29^\circ 38'$:

19*. a սմ յերկարության լարը R սմ շառավիղն ունեցող շրջանը բաժանում է յերկու սեգմենտի: Դաեք փոքր սեգմենտի մակերեսը ($a=3,5$; $R=6,2$):

20*. R սմ յերկարության շառավիղ ունեցող շրջանի մեջ տարված է յերկու զուգահեռ լար: Այդ լարերից յուրաքանչյուրը ձգում է α աստիճան պարունակող աղեղ: Վորոշեցեք շրջանի մակերեսի այն մասը, վորը գտնվում է լարերի միջև:

Յևանկ. խնդ. ժող.—4



Գծ. 18

Խառք խնդիրներ

21*. Կիսաշրջանագիծը բաժանել են 4:7 հարաբերությամբ և բաժանման կետից ուղղահայաց են իջեցրել տրամագծին: Վորոշեցեք տրամագծի հատվածները, յեթե նրա յերկարությունը հավասար է 11 սմ-ի:

22*. Զուգահեռագծի մեջ տված է α սուր անկյունը և անկյունագծերի հատման կետի a և b հեռավորություններն անհավասար կողմերից: Վորոշեցեք զուգահեռագծի անկյունագծերն ու մակերեսը:

23*. Հաշվեցեք յերեք փոխադարձաբար իրար շոշափող շրջանագծերով սահմանափակված մակերեսը, յեթե այդ շրջանագծերի շառավիղները համապատասխանաբար հավասար են 1 մ-ի, 2 մ-ի և 3 մ-ի:

24*. Վորոշեցեք այն շեղանկյան սուր անկյունը, վորի կողմն անկյունագծերի միջին համեմատականն է:

§ 16. ՈՒՂԻՂՆԵՐ ՅԵՎ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարթությանն ուղղահայաց յեվ րեք գծեր

1. M կետից P հարթության տարած ուղղահայացի ու թեքի միջև կազմված անկյունը հավասար է α -ի: Թեքի յերկարությունը հավասար է a -ի: Վորոշեցեք M կետի հեռավորությունը հարթությունից ($a = 11,22$; $\alpha = 72^\circ 54'$):

2. Հարթությանը տարված է P յերկարության ուղղահայաց այդ ուղղահայացի հիմքից, վորպես կենտրոնից, հարթության վրա r շառավիղով գծված է շրջանագիծ: Վորոշեցեք ուղղահայացի և այդ ուղղահայացի ծայրը շրջանագծի վորևե կետի հետ միացնող ուղղի միջև կազմված անկյունը ($P = 4,54$; $r = 8$):

3. Գառակուսու կողմը՝ $AB = a = 30$: Այդ քառակուսու O կենտրոնից քառակուսու հարթության տարված է ուղղահայաց այդ ուղղահայացի վրա վերցրած է $OM = d = 20$ հատվածը, իսկ M կետից տարված է $MC \perp AB$: Հաշվեցեք MC ուղղի և քառակուսու հարթության վրա վերցրած նրա պրոյեկցիայի միջև կազմված x անկյունը:

4. Խորանարդի կողը հավասար է $a = 10$ սմ: Հաշվեցեք այն անկյունը, վորով խորանարդի անկյունագիծը թեքված է դեպի այդ խորանարդի նիստերը:


5. Սիլոսի քառակուսաձև հորի վրա պետք է շինել կաուր, կանոնավոր քառանկյուն բուրգի ձևով: Հիմքի կողմը հավասար է 6,5 մ-ի: Կաուրի բարձրությունը պետք է հավասար լինի 2,5 մ-ի: Վորոշեցեք SA ծակդասարկների յերկարությունը և այդ գծի թեքությունը դեպի հիմքի հարթությունը (դժ. 19):

6. Կանոնավոր քառանկյուն բուրգի բարձրությունը հավասար


է 7 սմ-ի, իսկ հիմքի կողմը՝ 8 սմ-ի: Ի՞նչ անկյունով է թեքված կողմնային կողը, դեպի հիմքի հարթությունը:

7. Կանոնավոր քառանկյուն բուրգի ձև ունեցող վրանը կազմված է 4 ձողերից, վորոնք ձգում են բեղենտը (դժ. 20): Վրանի SO բարձրությունը հավասար է 2,4 մ-ի: Յերկու հարևան ձողերի հիմքերի հեռավորությունը հավասար է $AB = 2$ մ: Վորոշեցեք վրանի գագաթի և հիմքի կողմի միջնակետի SM հեռավորությունը, այսինքն բուրգի ապոթեմը, և այդ գծի թեքության անկյունը դեպի յերկրի հորիզոնական մակերևույթը:

8. ABC կանոնավոր յեռանկյան կողմը հավասար է a -ի: Այդ յեռանկյան O կենտրոնից կանգնեցրած է ուղղահայաց, վերջինի վրա վերցված է M կետն այնպես,



Գժ. 19



Գժ. 20


վոր $MA = a$. այնուհետև M կետից տարված է $MD \perp AC$ հատվածը: Հաշվեցեք MD ուղիղի և ABC յեռանկյան հարթության միջև կազմված φ անկյունը:

9. Թեքը հարթության հետ կազմում է α անկյունը: Տված հարթության մեջ այդ անկյան գագաթից տարված է մի յերկրորդ ուղիղ, վորը թեքի (այդ հարթության վրա վերցրած) պրոյեկցիայի հետ կազմում է β անկյունը: Վորոշեցեք այդ ուղիղներով կազմված անկյունը ($\alpha = 43^\circ 53'$; $\beta = 11^\circ 10'$):

10. Տված հարթության մեջ չգտնվող ուղիղը, հատվելով հարթության մեջ գտնվող ուղղի հետ, կազմում է α անկյունը, իսկ վերջինը կազմում է առաջին ուղղի տված հարթության վրա վերցրած պրոյեկցիայի հետ β անկյունը: Վորոշեցեք առաջին ուղղի կազմած անկյունը հարթության հետ ($\alpha = 8^\circ 26'$; $\beta = 5^\circ 40'$):

11. a , b և c կողմերն ունեցող յեռանկյանն արտագծած շրջանագծի կենտրոնից կանգնեցրած է այդ յեռանկյան հարթությանը h ուղղահայացը: Վորոշեցեք այն անկյունները, վոր կազմում են ուղղահայացի ծայրը յեռանկյան գագաթների հետ միացնող գծերն այդ հարթության հետ ($h = 60$; $a = 30$; $b = 5$; $c = 29$):

12. Հորիզոնական հարթության միջով անցնում է ուղղագիծ ճանապարհի a մետր յերկարություն ունեցող BC հատվածը: Ճանապարհի մոտ գտնվում է մի սար, վորի գագաթը C կետից յերևում է φ անկյան տակ (գծ. 21): S գագաթը, պրոյեկտվում է ճանապարհի հարթության վրա A կետում: BC հատվածն իր ծայրերից դեպի A կետն ուղղված ճառագայթների հետ կազմում է $\angle ACB = \gamma$ և $\angle ABC = \beta$ անկյունները: Վորոշեցեք այդ սարի բարձրությունը: ($a = 400$, $\beta = 40^\circ 10'$; $\gamma = 60^\circ 40'$; $\varphi = 50^\circ 50'$):




Գծ. 21

Վորոշեցեք հիմքի կողմով և կողմնային կողի միջնակետով անցկացրած հատվածի մակերեսը:

Ջուգահեռ ուղիղներ չեմ հարթություններ

կյունը (յերկուս դեպք):

15. Հարթության յերկու կետերից տարված են այդ հարթությանը յերկու իրար զուգահեռ թեքեր (AM և BN), վորոնք հարթության հետ կազմում են α անկյունը (գծ. 23): Այդ ուղիղների ուղղահայացաբար հատող MN ուղիղը հարթության հետ կազմում է β անկյունը: Վորոշեցեք AB և AM ուղիղների միջև կազմված φ անկյունը:



Գծ. 23

16. Հարթության յերկու կետերից, վորոնց հեռավորությունը հավասար է a -ի, տարված են յերկու իրար զուգահեռ թեքեր, վորոնք հարթության հետ կազմում են φ անկյունը: Վորոշեցեք այդ թեքերի հեռավորությունը, յեթե տվյալ հարթության վրա վիրցրած նրանց պրոյեկցիաների հեռավորությունը հավասար է b -ի:


17. AB հատվածը զուգահեռ է հարթությանը: Այդ հատվածի ծայ-

րերից հարթությանը տարված են յերկու թեքեր, այն է՝ $AC = c$ և $BD = d$:

AC թեքը հարթության հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք BD թեքի կազմած անկյունը հարթության հետ ($c = \sqrt{6}$; $d = 3$; $\alpha = 60^\circ$):

18. Հարթության զուգահեռ հատվածի ծայրերից տարված են այդ հատվածին ուղղահայացներ այնպես, վոր նրանք հարթության հետ կազմում են α և β անկյունները ($\alpha > \beta$): Հատվածի յերկարությունը հավասար է a -ի: Ուղղահայացների և հարթության հատման կետերի միջև յեղած հեռավորությունը հավասար է b -ի: Վորոշեցեք հարթության հեռավորությունը հատվածից (յերկուս դեպք):


19. Յերկու ուղիղների այն հատվածները, վորոնք գտնվում են յերկու զուգահեռ հարթությունների միջև, հարաբերում են այնպես, ինչպես $2:3$, իսկ այն անկյունները, վոր այդ ուղիղները կազմում են հարթության հետ, հարաբերում են այնպես, ինչպես $2:1$: Վորոշեցեք այդ անկյունները:



Գծ. 23

§ 17. ՅԵՐԿՆԻՍՏ ՅԵՎ ԲԱԶՄԱՆԻՍՏ ԱՆԿՅՈՒՆՆԵՐ

1. Տրված է α յերկնիստ անկյունը: Այդ անկյան նիստերից մեկի վրա, կողից a հեռավորությունն ունեցող կետից կանգնեցրած է ուղղահայաց մինչև մյուս նիստի հետ հատվելը: Վորոշեցեք այդ ուղղահայացի յերկարությունը ($a = 6,06$; $\alpha = 41^\circ 55'$):



Գծ. 24


2. 1) ABC ուղղանկյուն յեռանկյան AB ներքնածիզը գտնվում է P հարթության մեջ, իսկ եջերը P հարթության հետ կազմում են α և β անկյունները (գծ. 24): Վորոշեցեք յեռանկյան հարթության և P հարթության միջև կազմված φ անկյունը:

2) ABC յեռանկյան մի կողմը (AB) գտնվում է P հարթության մեջ: Մյուս յերկու կողմերը (CA և CB) P հարթության հետ կազմում են α և β անկյունները, վորոնց տանգենսները համապա-

տասխանաբար հավասար են $\frac{1}{3}$ -ի և $\frac{1}{4}$ -ի, իսկ CA և CB կողմերի պրոյեկցիաները, նույն հարթության վրա, փոխուղղահայաց են: Վորոշեցեք ABC յեռանկյան թեքությունը դեպի P հարթությունը:

3. 20° թեքություն ունեցող կտուրի վրա անցկացրած ե MN ուղիղը (գծ. 25), վորը ամենամեծ վայրեջքի MK գծի հետ կազմում է 25° անկյուն (վորպես ամենամեծ վայրեջքի գծի ծառայում է հարթության վրա անցկացրած հորիզոնական գծի ուղղահայացը): Վորոշեցեք MN ուղղի կազմած x անկյունը հորիզոնի հետ:

4. Սարի 32° թեքություն ունեցող լանջի վրայով անցնում է մի ճանապարհ, վորն ամենամեծ վայրեջքի հետ կազմում է 45° անկյուն (տես Յ-ըգ խնդիրը): Գտեք ճանապարհի թեքությունը:



Գծ. 25

գծի և M և P հարթությունների հաաման գծի միջև կազմված անկյունը:

6. Կանոնավոր n-անկյուն բուրգի բարձրությունը յերկու անգամ փոքր է հիմքի կողմից: Վորոշեցեք հիմքի յերկնիստ անկյունը:


7. 27-ըգ գծագրի վրա տված է լողացող պոնտոնային կոտենկի ուղվագիծը (պոնտոնը — յերկաթե հարթահատակ նավակ է), վորը պրոյեկտված է ուղղաձիգ և հորիզոնական հարթությունների վրա: Չափսերը տված են մետրերով: Վորոշեցեք՝

a) շեղվիրների a յերկարությունը և հենարանների b յերկարությունը:

b) շեղվիրների և հենարանների թեքության անկյունները դեպի պոնտոնի հարթ մակերևույթը:

c) շեղվիրների միջև կազմված անկյունը և հենարանների միջև կազմված անկյունը:

d) շեղվիրների հարթության և պոնտոնի հարթության միջև կազմված անկյունը, հենարանների հարթության և պոնտոնի հարթության միջև կազմված անկյունը:





Գծ. 26

5. M հարթության A կետից տարված է AD թեքը, վորը հարթության հետ կազմում է α անկյունը (գծ. 26): AD ուղղով տարված է M հարթության հետ $DBC = \beta$ անկյուն կազմող P հարթությունը: Վորոշեցեք AD

8. Գառակուսի հիմք ունեցող շինություն ծածկը տրված է հատակագծի վրա (գծ. 28). չափսերը տրված են մետրերով: Ծածկի վերին մակերեսի բարձրությունը տանիքի հիմքից, հավասար է շենքի լայնության $\frac{1}{3}$ մասին: Բոլոր չորս լանջերն ել միևնույն թեքություն ունեն դեպի հորիզոնական հարթությունը: Ինչի՞ց է հավասար ծածկի թեքության անկյունը:

9. Ուղղանկյուն յեռանկյան մեջ տրված են a ներքնածիղը և α սուր անկյունը: Վորոշեցեք ուղիղ անկյան գագաթի հեռավորությունն այն հարթությունից, վորն անցնում է ներքնածիղով և յեռանկյան հարթության հետ կազմում է φ անկյունը:




Գծ. 27

10. Բուրգի հիմքը կանոնավոր յեռանկյուն է: Յերեք նիստերից մեկն ուղղահայաց է հիմքին, իսկ մյուս յերկուսը թեքված են դեպի հիմքը α անկյան տակ: Կողմնային կողերն ինչ անկյան տակ են թեքված դեպի հիմքի հարթությունը:

11. AB ուղիղը զուգահեռ է P հարթության: CD ուղիղը AB-ին հատում է α անկյան տակ և P հարթության հետ կազմում է φ անկյունը:

Վորոշեցեք այն անկյունը, վոր P հարթությունը կազմում է AB և CD ուղիղներով անցնող հարթության հետ:




Գծ. 28


12. Ուղղանկյուն չորսույի մի գագաթից դուրս յեկող կողերի ծայրերը միացված են ուղիղներով: Չորսույի նիստերի վրա առաջացած յեռանկյունների մակերեսները հավասար են 4 դմ^2 , 6 դմ^2 , 12 դմ^2 : Վորոշեցեք չորսույի հիշյալ կետերով անցնող հարթությունով առաջացած հատվածի և փոքր հիմքի միջև կազմված անկյունը:

13. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ հիմքի կողմն ու կողմնային կողը հարաբերում են այնպես, ինչպես $\sqrt{3} : \sqrt{2}$: Հիմքի անկյունագծով տարված է կողմնային կողին զուգահեռ հարթությունը: Վորոշեցեք այդ հարթության թեքությունը հիմքի նկատմամբ:

14. Զուգահեռագիծն ու P հարթությունը դասավորված են այնպես, Վոր զուգահեռագծի փոքր կողմերից մեկը գտնվում է P հարթության վրա, իսկ այդ կողմին հակադիր կողմի հեռավորությունը P հարթությունից հավասար է զուգահեռագծի մեծ կողմերի հեռավորությանը: Վորոշեցեք P հարթության և զուգահեռագծի հարթության միջև կազմված անկյունը, յեթե զուգահեռագծի կողմերը հարաբերում են այնպես, ինչպես $3:5$:



Գծ. 29



Գծ. 30

15. Հաշվեցեք՝

- 1) կանոնավոր տետրաեդրի,
- 2) » ութանկյան,
- 3) » իկոսանկյան (գծ. 29),
- 4) » դոդեկանկյան (գծ. 30)

յերկու հարևան նիստերով կազմված անկյունը:

§ 18. ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՊՐՈՅԵԿՏԻԱՆԵՐԻ (ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ) ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ

1. Զուգահեռագծի մակերեսը՝ $Q = 50$ սմ²: Այդ զուգահեռագծի հարթությունը պրոյեկցիաների P հարթության հետ կազմում է 30° անկյուն: Զուգահեռագծի մի կողմը գտնվում է P հարթության վրա: Վորոշեցեք զուգահեռագծի պրոյեկցիայի մակերեսը:

2. Ուղիղ յեռանկյուն պրիզմայի հիմքի կողմերից մեկով տարված է մի հարթություն, վորը հատում է հանդիպակաց կողմնային կողը և թեքված է հիմքի հարթությունից 45° -ով: Վորոշեցեք հատվածի մակերեսը, յեթե հիմքի մակերեսը հավասար է Q -ի:

3. Կանոնավոր յեռանկյուն պրիզմայի հիմքի կողմով տարված է մի հատող հարթություն, վորը թեքված է դեպի հիմքի հար-

թությունը α անկյան տակ: Հիմքի կողմը հավասար է a -ի: Գտեք հատվածի մակերեսը:

4. Կտուրի վրա ծխնելույզի համար բաց թողած անցքի մակերեսը հավասար է 2100 սմ²-ի: Կտուրի թեքության անկյունը հավասար է 32° -ի: Ծխնելույզն ունի քառակուսի պրիզմայի ձև: Գտեք պրիզմայի հիմքի կողմը:


5. Ծխնելույզի չափերն են՝ 40 սմ $\times$ 40 սմ: Կտուրի թեքության անկյունը հավասար է 35° -ի: Վորոշեցեք կտուրի վրա թողած անցքի մակերեսը:

6. Դառալանջ կտուրը ծածկում է 28 մ² մակերես: Կտուրի բոլոր լանջերը ունեն $32^\circ 53'$ թեքություն: Գտեք կտուրի մակերեսը:

7. Դառալանջ կտուրի կողմնային լանջը մի հավասարաբուն սեղան է, վորի զուգահեռ կողմերը հավասար են 10 մ-ի և 6 մ-ի, իսկ բարձրությունը՝ 5 մ-ի:

Լանջի պրոյեկցիան տանիքի հարթության վրա հավասար է 32 մ²: Գտնել լանջի թեքության անկյունը և պիպի բարձրությունը տանիքից:

8. Յի-րդ պծագրի վրա նկարված են միալանջ և քառալանջ կտուրների սխեմաները, վորոնք ունեն ուղղանկյան ձև (a և b կողմերով): Յերկու կտուրների լանջերն ել թեքված են դեպի հորիզոնը α անկյան տակ: Այդ կտուրներից վորը ներկելու համար ավելի շատ ներկ կպահանջվի:




Գծ. 31


9. Լուսավորվածության պայծառությունը կախում ունի այն անկյունից, վորը կազմում է լույսի ճառագայթը լուսավորվող մակերևույթի հետ: Դիցուք լուսավորվող մակերեսը հավասար է Q -ի, իսկ լուսավորվող հարթության և լույսի ճառագայթների միջև կազմած անկյունը հավասար է α -ի: Ի՞նչ մակերեսի վրա կընկնելին լույսի նույն ճառագայթները, յեթե լուսավորվող հարթությունն ուղղահայաց լիներ լույսի ճառագայթներին: Այդ մակերեսը նախորդից մեծ, թե վորք էլին: Ավելի պայծառ լուսավորված էլին, թե խավար:

10. Ի՞նչ մեծության հորիզոնական մակերես կարելի չի ծածկել 120 մ² կտրով, յեթե վերջինի թեքությունը հավասար է $27^\circ 30'$ -ի:

14. Զուգահեռագծի ու P հարթությունը դասավորված են այնպես, Վոր զուգահեռագծի փոքր կողմերից մեկը գտնվում է P հարթության վրա, իսկ այդ կողմին հակադիր կողմի հեռավորությունը P հարթությունից հավասար է զուգահեռագծի մեծ կողմերի հեռավորությանը: Վորոշեցեք P հարթության և զուգահեռագծի հարթության միջև կազմված անկյունը, յեթե զուգահեռագծի կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 3 : 5:



Գծ. 29



Գծ. 30

15. Հաշվեցեք՝

- 1) կանոնավոր տետրաեդրի,
- 2) » ուղտանդրի,
- 3) » իկոսանդրի (գծ. 29),
- 4) » դոդեկանդրի (գծ. 30)

յերկու հարևան նիստերով կազմված անկյունը:

§ 18. ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՊՐՈՅԵԿՏԻԱՆԵՐԻ (ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ) ՄԱԿԵՐԵՄՆԵՐԸ

1. Զուգահեռագծի մակերեսը՝ $Q = 50$ մ²: Այդ զուգահեռագծի հարթությունը պրոյեկցիաների P հարթության հետ կազմում է 30° անկյուն: Զուգահեռագծի մի կողմը գտնվում է P հարթության վրա: Վորոշեցեք՝ զուգահեռագծի պրոյեկցիայի մակերեսը:

2. Ուղիղ յեռանկյուն պրիզմայի հիմքի կողմերից մեկով տարված է մի հարթություն, վորը հատում է հանդիպակաց կողմային կողը և թեքված է հիմքի հարթությունից 45° -ով: Վորոշեցեք հատվածի մակերեսը, յեթե հիմքի մակերեսը հավասար է Q -ի:

3. Կանոնավոր յեռանկյուն պրիզմայի հիմքի կողմով տարված է մի հատող հարթություն, վորը թեքված է դեպի հիմքի հար-

թությունը α անկյան տակ: Հիմքի կողմը հավասար է a -ի: Գտեք հատվածի մակերեսը:

4. Կտուրի վրա ծխնելույզի համար բաց թողած անցքի մակերեսը հավասար է 2100 սմ²-ի: Կտուրի թեքության անկյունը հավասար է 32° -ի: Ծխնելույզն ունի քառակուսի պրիզմայի ձև: Գտեք պրիզմայի հիմքի կողմը:


5. Ծխնելույզի չափսերն են՝ 40 սմ $\times$ 40 սմ: Կտուրի թեքության անկյունը հավասար է 35° -ի: Վորոշեցեք կտուրի վրա թողած անցքի մակերեսը:

6. Քառալանջ կտուրը ծածկում է 28 մ² մակերես: Կտուրի բոլոր լանջերը ունեն $32^\circ 53'$ թեքություն: Գտեք կտուրի մակերեսը:

7. Քառալանջ կտուրի կողմային լանջը մի հավասարաբուն սեղան է, վորի զուգահեռ կողմերը հավասար են 10 մ-ի և 6 մ-ի, իսկ բարձրությունը՝ 5 մ-ի:

Հանջի պրոյեկցիան տանիքի հարթության վրա հավասար է 32 մ²: Գտնել լանջի թեքության անկյունը և պիպի բարձրությունը տանիքից:

8. 31-րդ պծագրի վրա նկարված են միալանջ և քառալանջ կտուրների սխեմաները, վորոնք ունեն ուղղանկյան ձև (a և b կողմերով): Յերկու կտուրների լանջերն էլ թեքված են դեպի հորիզոնը α անկյան տակ: Այդ կտուրներից վորը ներկելու համար ավելի շատ ներկ կպահանջվի:



Գծ. 31

9. Լուսավորվածության պայծառությունը կախում ունի այն անկյունից, վորը կազմում է լույսի ճառագայթը լուսավորվող մակերևույթի հետ: Դիցուք լուսավորվող մակերեսը հավասար է Q -ի, իսկ լուսավորվող հարթության և լույսի ճառագայթների միջև կազմված անկյունը հավասար է α -ի: Ի՞նչ մակերեսի վրա կընկնային լույսի նույն ճառագայթները, յեթե լուսավորվող հարթությունն ուղղահայաց լիներ լույսի ճառագայթներին: Այդ մակերեսը նախորդից մեծ, թե փոքր կլինի: Ավելի պայծառ լուսավորված կլինի, թե խավար:

10. Ի՞նչ մեծության հորիզոնական մակերես կարելի չե ծածկել 120 մ² կտրով, յեթե վերջինի թեքությունը հավասար է $27^\circ 30'$ -ի:

§ 19. ԶՈՒԳԱՀԵՌԱՆԻՍՏԵՐ, ՊՐԻԶՄԱՆԵՐ, ԲՈՒՐԳԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՅ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ

Զուգահեռանիստներ
յեւ պրիզմաներ

1. Ուղղանկյուն զուգահեռանիստի անկյունագծի և կողմերի միջև կազմված անկյունները հավասար են α , β և γ :

1) Ապացուցեք, վոր


$$\cos^2 \alpha + \cos^2 \beta + \cos^2 \gamma = 1,$$

2) Հաշվեցեք γ -ն, յեթե $\alpha = 31^\circ 10' 24''$ և $\beta = 69^\circ 9' 36''$:


2. Յեթե կանոնավոր քառանկյուն պրիզման հատենք այնպես, վոր հատվածքում ստացվի α սուր անկյունն ունեցող մի շեղանկյուն, ապա հատող հարթությունը զուգահեռ կլինի հիմքի անկյունագծին և հիմքի հարթության հետ կկազմի այնպիսի φ անկյուն, վոր

$$\cos \varphi = \operatorname{tg} \frac{\alpha}{2}:$$

Ապացուցեք այդ:



Գծ. 32



Գծ. 33

3. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի մեջ (գծ. 32) հիմքի հաբան յերկու կողմերի միջնակետերով տարված և մի հարթություն, վորը հատում և կողմնային յերեք կողմերը և թեքված և ղեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Հիմքի կողմը հավասար և a -ի: Վորոշեցեք ստացված հատվածքի մակերեսը:

4. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի մեջ (գծ. 33), հիմքի յերկու հաբան կողմերի միջնակետերով ու պրիզմայի առանցքի միջնակետով տարված և հարթություն: Գիտենալով, վոր հիմքի կողմը հավասար և a -ի, իսկ կողմնային կողմը b -ի, վորոշեցեք՝ 1) ստացված հատվածքի մակերեսը և 2) անցկացրած հարթության ու հիմքի հարթության միջև կազմված անկյունը:

5. Ուղիղ քառանկյուն պրիզմայի հիմքը α սուր անկյունն ու-

նեցող շեղանկյուն և: Ի՞նչպես պետք և հատել այդ պրիզման, վոր հատվածքը լինի մի քառակուսի, վորի գագաթները գտնվում են կողմնային կողերի վրա:

6. Ուղղանկյուն զուգահեռանիստի մեջ d անկյունագիծը հիմքի հետ կազմում և β անկյուն: Հիմքի անկյունագիծը կողմի հետ կազմում և α անկյունը: Վորոշեցեք զուգահեռանիստի կողմնային մակերևույթը ($\alpha = 21^\circ 35'$; $\beta = 54^\circ 24'$; $d = 17,89$ մ):

7. Ուղիղ զուգահեռանիստի հիմքը շեղանկյուն և: Այդ շեղանկյան փոքր անկյունագիծը հավասար և d -ի, իսկ սուր անկյունը α -ի: Զուգահեռանիստի բարձրությունը հավասար և $\frac{d}{2}$ -ի: Գտեք այդ զուգահեռանիստի լրիվ մակերևույթը ($d = 25,87$; $\alpha = 75^\circ 20'$):

8. Կանոնավոր հնգանկյուն պրիզմայի հիմքի կողմը հավասար և a -ի: Այդ պրիզմայի բարձրությունը հավասար և $\frac{1}{4}d$ -ի, վորտեղ d -ն հիմքի անկյունագիծն և: Հաշվեցեք պրիզմայի լրիվ մակերևույթը ($a = 23,79$ մ):

9. Ուղիղ պրիզմայի հիմքը հավասարասրուն յեռանկյուն և, վորի մեջ a հավասար կողմերով կազմված անկյունը հավասար և α -ի: Վերին հիմքի գագաթից տարված են յերկու հավասար կողմնային նիստերի անկյունագծերը: Այդ անկյունագծերով կազմված անկյունը հավասար և β -ի: Գտեք պրիզմայի կողմնային մակերևույթը ($a = 97,84$ մմ; $\alpha = 63^\circ 28'$ և $\beta = 39^\circ 36'$):

10. Յեռանկյուն պրիզմայի մեջ հիմքի յուրաքանչյուր կողմը հավասար և a -ի: Հիմքի գագաթներից մեկի պրոյեկցիան մյուս հիմքի կենտրոնն և: Կողմնային կողերը թեքված են ղեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք պրիզմայի կողմնային մակերևույթը:

Բուրգ

11. Բուրգի մեջ, վորի հիմքը կանոնավոր յեռանկյուն և, կողմնային նիստերից մեկը ուղղահայաց և հիմքին, իսկ մյուս յերկուսը նրա հետ կազմում են γ անկյունը: Վորոշեցեք կողմնային կողերի կազմած անկյունները հիմքի հարթության հետ ($\varphi = 30^\circ$):


12. Կանոնավոր n -անկյուն բուրգի մեջ գագաթի հարթ անկյունը հավասար և α -ի: Վորոշեցեք հիմքի յերկնիստ անկյունները ($n = 4$; $\alpha = 60^\circ$):

13. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ հիմքի կողմը հավասար և a -ի, իսկ կողմնային կողը հիմքի հարթության հետ կազմում α անկյունը: Այդ բուրգին ներգծած և խորանարդ այնպես, վոր նրա

զագաթներին չորսը գտնվում են բուրգի ապոթեմներին վրա: Վորոշեցեք խորանարդի կողը:

14. Կանոնավոր յեռանկյուն բուրգի մեջ հիմքի կողմը հավասար է a -ի և կողմնային կողի հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք բուրգի կողմնային կողով ու բարձրությունով անցկացրած հատվածքի մակերեսը:

15. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ տրված են c ապոթեմը և անկյունագծային հատվածքի P մակերեսը: Այս բուրգի մեջ վորոշեցեք կողմնային նիստի և հիմքի միջև կազմված անկյունն ու հիմքի կողմը ($c=5$; $P=15$):



Գծ. 34

16. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ բարձրությունը հարաբերում է հիմքի կողմին այնպես, ինչպես $m : n$: Հիմքի անկյունագծով տարված է թեք հարթություն այնպես, Վոր ստացված հատվածքը հավասար է անկյունագծային հատվածքին: Վորոշեցեք անցկացրած հարթության և բուրգի հիմքի միջև կազմված անկյունը ($m : n = 1 : \sqrt{6}$):

17. Կանոնավոր յեռանկյուն բուրգի մեջ (գծ. 34) տված են հիմքի կողմը (a) և հիմքին առնթեր յերկնիստ անկյունը (α): Վորոշեցեք $DEFK$ հատվածքի մակերեսը, վորը տարված է հիմքի կենտրոնով և զուգահեռ է բուրգի յերկու չհատվող SA և BC կողերին ($a=3$; $\alpha=70^\circ$):

18. Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ հիմքի յերկնիստ անկյունը հավասար է α -ի: Այդ յերկնիստ անկյան կողով բուրգի ներսում տարված է մի հարթություն, վորը հիմքի հետ կազմում է β անկյունը: Հիմքի կողմը հավասար է a -ի: Վորոշեցեք հատվածքի մակերեսը:

Պրոյեկցիայի մակերեսի քննարկում կիրառումը բուրգի մակերեսվայրը գտնելիս

վորտեղ S -ը մակերևույթն է, Q -ն՝ հիմքի մակերեսը: Ապացուցեք այդ:

20. (բանավոր). Բուրգի հիմքն ուղղանկյուն յեռանկյուն է: Այդ յեռանկյան եջերը հավասար են՝ 6 սմ և 8 սմ: Բուրգի կողմնային բոլոր նիստերը թեքված են դեպի հիմքը 60° անկյան տակ: Գտեք $S_{կողմ}$ -ը:

21. 1) (բանավոր). Կանոնավոր քառանկյուն բուրգի հիմքի կողմը հավասար է a -ի, իսկ հիմքին առնթեր յերկնիստ անկյունը՝ 60° -ի: Վորոշեցեք այդ բուրգի կողմնային մակերևույթը:

2) Տրված են յերկու կանոնավոր բուրգեր՝ յեռանկյուն և վեցանկյուն: Յուրաքանչյուր բուրգի մեջ հիմքի կողմը հավասար է a -ի, իսկ հիմքի յերկնիստ անկյունը՝ 30° -ի: Վորոշեցեք յուրաքանչյուր բուրգի կողմնային մակերևույթը:

22. Յեռանկյուն բուրգի հիմքի կողմերը հավասար են 13 սմ, 14 սմ և 15 սմ, իսկ հիմքին առնթեր յերկնիստ անկյուններից յուրաքանչյուրը հավասար է 60° -ի: Վորոշեցեք բուրգի կողմնային մակերևույթը:

23. Աշտարակը վերջանում է կանոնավոր ութանկյուն բուրգի ձև ունեցող կաուրով: Կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքը 60° անկյան տակ: Բուրգի հիմքի կողմը հավասար է 1,23 մ-ի: Գտնել՝ քառակուսի մետր թիթեղ և հարկավոր այդ կաուրը ծածկելու համար:

24. Կանոնավոր բուրգի հիմքի մակերեսը հավասար է 168 սմ²: Կողմնային մակերևույթը հավասար է 200 սմ²: Վորոշեցեք կողմնային նիստի և հիմքի միջև կազմված անկյունը:

25 (բանավոր). Կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքը α անկյան տակ: Հիմքի կողմը հավասար է a -ի: Հաշվեցեք $S_{կողմ}$ -ը:

26. Կանոնավոր քառանկյուն բուրգի բարձրությունը հավասար է h -ի: Հիմքի յերկնիստ անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք այդ բուրգի լրիվ մակերևույթը:

27. Բուրգի հիմքը մի շեղանկյուն է: Այդ շեղանկյան կողմը հավասար է a -ի, իսկ սուր անկյունը՝ α -ի: Բուրգի հիմքի յերկնիստ անկյունները հավասար են φ -ի: Գտեք բուրգի լրիվ մակերևույթը ($S_{լրիվ}$):

28. Կանոնավոր n -անկյուն բուրգի ապոթեմը հավասար է k -ի և հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Գտեք այդ բուրգի լրիվ մակերևույթը ($n=12$; $k=36,3$; $\alpha=35^\circ 40'$):

29. Բուրգի հիմքը հավասարասրուն սեղան է, վորի զուգահեռ կողմերը հավասար են a և b ($a > b$): Բուրգի բոլոր կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Գտեք լրիվ մակերևույթը ($S_{լրիվ}$):

30. Բուրգի հիմքը մի հավասարասրուն սեղան է, վորի անկյունագիծը հավասար է l -ի և մեծ հիմքի հետ կազմում է α անկյունը: Բուրգի բոլոր կողմնային նիստերը թեքված են դեպի հիմքի հարթությունը φ անկյան տակ: Վորոշեցեք լրիվ մակերևույթը ($S_{լրիվ}$):

$$S_{կողմ} = \frac{Q}{\cos \alpha} \text{ և } S_{լրիվ} = \frac{2 Q \cos^2 \frac{\alpha}{2}}{\cos \alpha},$$

Բուրգի մակերևույթը

31. Կանոնավոր չեռանկյուն բուրգի մեջ տված են հիմքի կողմը (a) և գագաթի հարթ անկյունը (α): Պետք է վորոշել այդ բուրգի լրիվ մակերևույթը:

32. Կանոնավոր n -անկյուն բուրգի մեջ հիմքի կողմը հավասար է a -ի: Կողմնային կողմը հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք կողմնային մակերևույթը:

33. Յեռանկյուն բուրգի գագաթի հարթ անկյունները հավասար են α , α և β : Յերկու հավասար անկյունների ընդհանուր կողմ ծառայող կողմնային կողմ ուղղահայաց է հիմքի հարթության և հավասար է a -ի: Վորոշեցեք այդ բուրգի կողմնային մակերևույթը:

34. Բուրգի հիմքը քառակուսի չէ: Քառակուսու կողմը հավասար է a -ի: Կողմնային նիստերից չերկուսն ուղղահայաց են հիմքին, իսկ մյուս չերկուսը հիմքի հետ կազմում են α անկյուն: Վորոշեցեք այդ բուրգի կողմնային և լրիվ մակերևույթները ($S_{\text{կողմ}}$ և $S_{\text{լրիվ}}$):

35. Բուրգի հիմքն ուղղանկյուն է: Կողմնային նիստերից յերկուսն ուղղահայաց են հիմքին, իսկ մյուս չերկուսը հիմքի հետ կազմում են α և β անկյունները: Բուրգի բարձրությունը հավասար է h -ի: Վորոշեցեք այդ բուրգի կողմնային մակերևույթը:

36. Բուրգի հիմքը մի շեղանկյուն է: Այդ շեղանկյան կողմը հավասար է a -ի, իսկ սուր անկյունը՝ α -ի: Կողմնային նիստերից յերկուսը (որինակ α անկյունը կազմող նիստերը) ուղղահայաց են հիմքին, իսկ մյուս չերկուսը թեքված են դեպի հիմքը φ անկյան տակ: Վորոշեցեք այդ բուրգի կողմնային մակերևույթը:

Հասած բուրգ

37. Կանոնավոր n -անկյուն հասած բուրգի մեջ տված են՝ կողմնային կողմը (c) ու հիմքի կողմերը (a և b): Վորոշեցեք հասած բուրգի բարձրությունը ($a > b$):

38. Կանոնավոր քառանկյուն հասած բուրգի մեծ և փոքր հիմքերի կողմերը հարաբերում են այնպես, ինչպես $m:n$: Կողմնային կողմերը թեքված են դեպի մեծ հիմքի հարթությունը α անկյան տակ: Այդ բուրգի մեջ, մեծ հիմքի կողմով և փոքր հիմքի այդ կողմի դիմաց գտնվող կողմով տարված է հարթություն: Ինչ անկյուն է կազմում այդ հարթությունը բուրգի մեծ հիմքի հետ:

39. Կանոնավոր n -անկյուն հասած բուրգի մեջ տված են h բարձրությունը և հիմքի a ու b կողմերը ($a > b$): Վորոշեցեք այդ հասած բուրգի լրիվ մակերևույթը:

40. Կանոնավոր n -անկյուն հասած բուրգի հիմքերի կողմերն են՝ a և b ($a > b$), կողմնային կողմ հիմքերի հարթությունների հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք այդ հասած բուրգի լրիվ մակերևույթը:

41. Կանոնավոր n -անկյուն հատած բուրգի մեջ հիմքերի մակերեսների հարաբերությունը հավասար է m^2 , ապրթեմը՝ k , բարձրության և ապրթեմի միջև կազմված անկյունը՝ α : Վորոշեցեք այդ հատած բուրգի կողմնային մակերևույթը:

42. Կանոնավոր քառանկյուն հատած բուրգի մեջ տված են՝ բարձրությունը (h), և այն անկյունները (α և β), վոր հատած բուրգի կողմնային կողմ ու անկյունագիծը կազմում են մեծ հիմքի հետ Վորոշեցեք այդ հատած բուրգի կողմնային մակերևույթը ($h = 25$; $\alpha = 50^\circ 15'$; $\beta = 35^\circ 40'$):

§ 20. ԳԼԱՆ, ԿՈՆ, ՀԱՏԱԾ ԿՈՆ ՅԵՎ ԴՐԱՆՑ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ


Գ Լ Ա Ն

1. Հավասարակողմ գլանի մեջ վերին հիմքի շրջանագծի մի վորևե կետը միացրած է ներքևի հիմքի շրջանագծի վորևե կետին: Դեպի այդ կետերը տարած շառավիղներով կազմված անկյունը հավասար է 30° -ի (նկատի չէ առնվում խաչվող ուղիղներով կազմված անկյունը): Վորոշեցեք միացնող ուղիղի և գլանի առանցքի միջև կազմված անկյունը:

2. Հավասարակողմ գլանի հիմքի շառավիղը հավասար է R -ի: Այդ գլանի մեջ վերին հիմքի շրջանագծի կետերից մեկը միացրած է ներքևի հիմքի շրջանագծի վորևե կետին: Միացնող ուղիղը հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք այդ ուղիղի և գլանի առանցքի ամենափոքր հեռավորությունը:

3. Գլանին տարված է շոշափող ուղիղ, վորը հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Վորոշեցեք ներքևի հիմքի կենտրոնի հեռավորությունն այդ ուղիղից, յեթե նրա հեռավորությունը շոշափման կետից հավասար է d -ի և հիմքի շառավիղը հավասար է R -ի:

4. Կանոնավոր չեռանկյուն բուրգի կողմնային կողմ հավասար է b -ի և հիմքի հարթության հետ կազմում է α անկյունը: Այդ բուրգին ներգծված է մի հավասարակողմ գլան այնպես, վոր նրա հիմքը գտնվում է բուրգի հիմքի հարթության վրա: Վորոշեցեք գլանի բարձրությունը (գծ. 35):



Գծ. 35

Լ ո Ն

5. Կոնի հիմքի շառավիղը հավասար է R-ի, իսկ ծնիչը թեքված է դեպի հիմքի հարթությունն α անկյան տակ: Այդ կոնի մեջ նրա զազաթից տարված է մի հարթություն, վորը բուրգի բարձրության հետ կազմում է φ անկյունը: Վորոշեցեք ստացված հատվածքի մակերեսը:

6. Կոնի զազաթը գտնվում է զուգահեռ հարթություններից մեկի վրա, իսկ հիմքը՝ մյուսի վրա: Կոնի առանցքի և ծնիչի միջև կազմված անկյունը հավասար է α -ի: Առանցքի միջնակետով տարված է մի ուղիղ, վորն այդ առանցքի հետ կազմում է β անկյունը և կոնի կողմնային մակերևույթը հատում է յերկու կետում: Այդ ուղիղի այն հատվածը, վորը գտնվում է զուգահեռ հարթությունների միջև, հավասար է a -ի: Վորոշեցեք այդ ուղիղի այն հատվածը, վորը գտնվում է կոնի ներսում:

7. Կոնի ծնիչը հավասար է l-ի և թեքված է դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք այդ կոնին ներգծած խորանարդի կողը:

8. Կոնի մեջ տված են հիմքի շառավիղը (R) և ծնիչի ու հիմքի հարթության միջև կազմված α անկյունը: Այդ կոնին ներգծված է մի հավասարակող ուղիղ յեռանկյուն պրիզմա այնպես, վոր նրա հիմքը գտնվում է կոնի հիմքի հարթության վրա: Վորոշեցեք այդ պրիզմայի կողի յերկարությունը:

Լ ո Ն
մակերևույթը

9. Կոնի a ծնիչը թեքված է դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք կոնի լրիվ մակերևույթը:

10. Կոնի կողմնային մակերևույթը յերեք անգամ մեծ է հիմքի մակերեսից: Վորոշեցեք հիմքի և ծնիչի միջև կազմված անկյունը:

11. Տված է մի կոն, վորի առանցքային հատվածքի մակերեսը 4 անգամ փոքր է լրիվ մակերևույթից: Վորոշեցեք այդ կոնի ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը:

12. Վորոշեցեք կոնի լրիվ մակերևույթը, յեթե ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը հավասար է α -ի, իսկ առանցքային հատվածքի մակերեսը Q-ի:

13. Կոնի իրար հետ φ անկյուն կազմող ծնիչներով տարված է հարթություն: Այդ հարթությունը թեքված է դեպի հիմքը α անկյան տակ: Հատվածքի մակերեսը հավասար է S-ի: Վորոշեցեք կոնի բարձրությունը ($\varphi = 52^\circ 16'$, $\alpha = 33^\circ 10' 13''$; $S = 617,5$ սմ²):

14. Կոնի հիմքի շառավիղը հավասար է r-ի: Ծնիչը թեքված է դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Վորոշեցեք կոնի կողմ-

նային մակերևույթը և այն հատվածքի մակերեսը, վորն անցնում է կոնի զազաթով և բարձրության հետ կազմում է δ անկյուն ($r = 2,3$ մ; $\alpha = 42^\circ 27'$; $\delta = 36^\circ 21' 18''$).

15. Հողային լիրն ունի 36-րդ դժագրի վրա տրված ձևը:

$$\text{Տված է } \frac{h}{b} = \frac{1}{n} = 0,05;$$

$$\frac{h}{r} = \frac{1}{m} = \frac{2}{3}; \quad h = 4 \text{ մ:}$$

Հաշվեցեք՝ 1) b-ն; 2) r-ը; 3) $\alpha = \angle BAO$; 4) $\varphi = \angle BCO$; 5) γ -ն; 6) պլանի մակերեսը; 7) լրիվ մակերևույթը:

16. (17)¹. Կոնի կողմնային մակերևույթը հավասար է S-ի, իսկ ծնիչը՝ a-ի: Գտեք առանցքային հատվածքի զազաթի անկյունը ($S = 81,312$ մ²; $a = 10$ մ):

17 (18). Կոնի բարձրությունը հավասար է H-ի, իսկ ծնիչը թեքված է դեպի հիմքի հարթությունը α անկյան տակ: Այդ կոնի լրիվ մակերևույթը կիսված է նրա բարձրության ուղղահայաց հարթության միջոցով: Վորոշեցեք՝ 1) հատող հարթության հեռավորությունը կոնի զազաթից. 2) կողմնային մակերևույթի մասերի հարաբերությունը ($\alpha = 60^\circ$):

18 (19). Կոնի առանցքային հատվածքի զազաթի անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք կոնի կողմնային մակերևույթի փուլածքի կենտրոնական անկյունը: (Որինակներ. 1) հավասարակողմ կոն, 2) $\alpha = 70^\circ 24'$).


Հատած կոն

19 (20). Հատած կոնի հիմքերից մեկի շառավիղը հավասար է R-ի, իսկ մյուս հիմքինը՝ r-ի: Այդ հատած կոնի ծնիչը թեքված է դեպի R շառավիղ ունեցող հիմքը α անկյան տակ: Վորոշեցեք հատած կոնի կողմնային մակերևույթը:

20 (21). Հատած կոնի բարձրությունը հիմքերի շառավիղների միջին համեմատականն է: Հիմքերի շառավիղների գումարը հավասար է m-ի: Հատած կոնի ծնիչի կազմած անկյունը հիմքի հարթության հետ հավասար է α -ի: Վորոշեցեք այդ հատած կոնի կողմնային մակերևույթը:

1 Փակագծի մեջ դրված են այն համարները, վոր ունեն այդ խնդիրները սույն գրքի նախորդ հրատարակության մեջ (1934 թ.):

Ցեռանկ. խնդ. ժող.—5



Գծ. 36

21 (22). Հատած կոնի իրար հետ β անկյուն կազմող յերկու ծնիչներով տարված ե հարթություն, վորը կոնի հիմքերը հատում ե m -ի և n -ի հավասար լարերով ($m > n$):

Յուրաքանչյուր լարը ձգում ե α աղեղ: Գտեք հատած կոնի կողմնային մակերևույթը:

22 (23). Հատած կոնի հիմքերի շառավիղներն են R և r : Այդ կոնի մեջ տարված ե մի հարթություն, վորը հիմքի հարթության հետ կազմում ե β անկյուն: Այդ հարթությունը յուրաքանչյուր հիմքի շրջանագծից հատում ե δ -ի հավասար աղեղ: Վորոշեցեք հատվածքի մակերեսը:

23 (24). Հատած կոնի բարձրությունը հավասար ե h -ի. ծնիչը ներքևի հիմքի հարթության հետ կազմում ե α անկյուն և ուղղահայաց ե այդ ծնիչի վերին ծայրը հանդիպակաց ծնիչի ներքևի ծայրի հետ միացնող ուղիղին: Վորոշեցեք այդ հատած կոնի կողմնային մակերևույթը:

24 (25). Հատած կոնի ներքևի և վերևի հիմքերի մակերեսներն ու կողմնային մակերևույթը հարաբերում են այնպես, ինչպես $m : n : p$: Վորոշեցեք ծնիչի կազմած անկյունը ներքևի հիմքի հետ:

25 (26). Մի հատած կոնի մեջ առանցքային հատվածքի անկյունագծերը փոխուղղահայաց են, իսկ ծնիչը ներքևի հիմքի հարթության հետ կազմում ե α անկյուն և հավասար ե l -ի: Վորոշեցեք այդ հատած կոնի կողմնային մակերևույթը և լրիվ մակերևույթը ($l = 12$; $\alpha = 70^\circ 20'$):

26 (27). Հատած կոնի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում ե α անկյունը: Հիմքերի մակերեսներն են Q և q : Վորոշեցեք կողմնային մակերևույթը ($S_{կողմ}$):

§ 21. ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ

Զուգահեռանիս

1. Ուղղանկյուն զուգահեռանիստի 1 անկյունագիծը թեքված ե դեպի հիմքի հարթությունը φ անկյան տակ. հիմքի անկյունագծերի միջև կազմված սուր անկյունը հավասար ե β -ի: Վորոշեցեք այդ զուգահեռանիստի ծավալը:

2. Ուղղանկյուն զուգահեռանիստի մեջ հիմքի անկյունագիծը հավասար ե $d = 7,5$ դմ, հիմքի անկյունագծերով կազմված անկյունը $\alpha = 35^\circ 27' 18''$, իսկ հիմքի մեծ կողմով անցկացրած անկյունագծային հարթության և հիմքի հարթության միջև կազմված անկյունը $\beta = 57^\circ 33' 17''$: Վորոշեցեք զուգահեռանիստի ծավալը:


3. Ուղիղ զուգահեռանիստի հիմքի սուր անկյունը հավասար ե α -ի, իսկ կողմերը՝ a -ի և b -ի: Զուգահեռանիստի փոքր անկյունագիծը

ծը հավասար ե հիմքի մեծ անկյունագծին: Վորոշեցեք այդ զուգահեռանիստի ծավալը:

4. Ուղիղ զուգահեռանիստի հիմքի անկյունագիծը՝ $AC = d$, CB կողմը $= \frac{1}{4} AC$ և $\angle ABC = \alpha$ (գծ. 37): Զուգահեռանիստի FC անկյունագիծը հիմքի հարթության հետ կազմում ե φ անկյունը: Գտեք զուգահեռանիստի ծավալը և հիմքերի AC , EH անկյունագծերի միջև կազմված անկյունը ($d = 14,278$ դմ; $\alpha = 106^\circ 6' 7''$; $\varphi = 57^\circ 46' 51''$):

5. Զուգահեռանիստի մեջ մի դագաթից յեկնող կողերն են՝ a , b և c : Այդ կողերից a -ն և b -ն փոխուղղահայաց են, իսկ c կողը դրանցից յուրաքանչյուրի հետ կազմում ե α անկյուն: Վորոշեցեք զուգահեռանիստի ծավալը և c կողի և ուղղանկյան հարթության միջև կազմված անկյունը ($\alpha = 120^\circ$):

6. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի անկյունագիծը կողմնային նիստի հետ կազմում ե α անկյունը: Հիմքի կողմը հավասար ե a -ի: Վորոշեցեք այդ պրիզմայի ծավալը:



Գծ. 37

7. Կանոնավոր քառանկյուն պրիզմայի ներքևի հիմքի անկյունագծով ու վերևի հիմքի դագաթով տարված ե հարթություն, վորը պրիզմայի յերկու հարևան կողմնային նիստերը հատում ե իրար հետ $\alpha = 58^\circ 48' 36''$ անկյուն կազմող ուղիղներով: Պրիզմայի հիմքի կողմը հավասար ե $a = 6,4$ սմ: Վորոշեցեք այդ պրիզմայի ծավալը:


8. Կանոնավոր յեռանկյուն պրիզմայի մեջ վերին հիմքի յերկու դագաթները միացված են ներքևի հիմքի դրանց հանդիպակաց կողմերի միջնակետերին: Ստացված ուղիղներով կազմված այն անկյունը, վոր իր բացվածքով դարձած ե դեպի հիմքի հարթությունը, հավասար ե α -ի: Հիմքի կողմը հավասար ե a -ի: Վորոշեցեք այդ պրիզմայի ծավալը:

9. ՅՑ-րդ դժագրի վրա տված ե յերկաթուղային լիքի կտրվածքը: α անկյունը վորոշվում ե $\text{tg } \alpha = \frac{2}{3}$ հավասարությունից: Քանի՞ խորանարդ մետր հող ե հարկավոր մեկ դժամետր յերկաթուղային լիքի համար: Գժագրի վրա չափսերը տված են մետրերով:

10. Ուղիղ պրիզմայի հիմքը ABC յեռանկյունն ե, վորի մեջ՝ $AC = b = 38,03$ դմ; $BC = a = 34,84$ դմ; $\angle ACB = \gamma = 58^\circ 22'$: Պրիզմայի կողմնային կողը հավասար ե ABC յեռանկյան h_c բարձրության: Վորոշեցեք պրիզմայի ծավալը:

11. Ուղիղ պրիզմայի h բարձրությունը հավասար ե 20 դմ-ի:


Այդ պրիզմայի հիմքը $\alpha = 45^\circ 42' 16''$ սուբստանկյունն ունեցող ուղղանկյուն սեղան է, վորն արտագծված է $r = 6,15$ զմ շառավիղն ունեցող շրջանին: Վորոշեցեք պրիզմայի ծավալը:



Գծ. 38

Թյունը ներքևում հավասար է $b = 14,2$ մ, խորությունը մեջտեղում հավասար է $h = 9,2$ մ: Քանի՞ խորանարդ մետր հող դուրս կգա փորվածքի չորաքանչյուր գծամետրից:

13. Պրիզմայի հիմքը ABC յեռանկյունն է, վորի մեջ $BC = a$ և $AB = AC$; AA_1 կողը հավասար է b -ի և ուղղահայաց է BC -ին: AA_1 կողին առնթեր յերկնիստ անկյունը հավասար է α -ի: Վորոշեցեք այդ պրիզմայի ծավալը:



Գծ. 39

14. Վորոշեցեք կանոնավոր n -անկյուն բուրգի ծավալը, յեթե այդ բուրգի կողմային կողը հավասար է b -ի և թեքված է դեպի հիմքը β անկյան տակ ($n = 8$; $b = 3,5$ մ; $\beta = 78^\circ 39'$):

15. Վորոշեցեք կանոնավոր քառանկյուն բուրգի ծավալը, յեթե այդ բուրգի կողմային կողը հավասար է b -ի, իսկ գագաթի հարթ անկյունը՝ α -ի:

16. Վորոշեցեք բուրգի ծավալը, յեթե նրա բարձրությունը հավասար է h -ի, կողմային կողերը թեքված են դեպի հիմքը φ անկյան տակ և հիմքը α և β անկյուններն ունեցող յեռանկյուն է:

17. Յեռանկյուն բուրգի մեջ յերկու կողմային նիստերը հավասարաբուն ուղղանկյուն յեռանկյուններ են, վորոնց ներքնաձիգերը հավասար են b -ի և իրար հետ կազմում են α անկյուն: Վորոշեցեք այդ բուրգի ծավալը:

18. Բուրգի հիմքը մի սեղան է, վորի յուրաքանչյուր կողմային կողմը և հիմքերից փոքրը հավասար են a -ի, իսկ սուր անկյունները՝ α -ի: Բուրգի կողմային կողերը հիմքի հարթության հետ կազմում են φ անկյուն: Վորոշեցեք այդ բուրգի ծավալը:

19. Բուրգի հիմքը հավասարաբուն սեղան է, վորի մեջ հիմքերը հավասար են a -ի և b -ի ($a > b$), իսկ անկյունագծերի անհավասար

12. Պահանջվում է կատարել փորվածք հորիզոնի նկատմամբ $\varphi = 18^\circ 30,5'$ թեքություն ունեցող հողամասում (գծ. 39): Փորվածքի կողքի շեպի անկյունը $\alpha = 68^\circ 10'$, փորվածքի լայնու-

հատվածների միջև կազմված անկյունը հավասար է α -ի: Բուրգի բարձրությունն անցնում է հիմքի անկյունագծերի հատման կետով: Հիմքի զուգահեռ կողմերին առնթեր յերկնիստ անկյունները հարաբերում են այնպես, ինչպես $1 : 2$: Վորոշեցեք այդ բուրգի ծավալը:

20. SABCD բուրգի հիմքն ABCD զուգահեռագիծն է: SB և SD կողերն ուղղահայաց են հիմքի BC և AD կողմերին և կազմում են հիմքի հարթության հետ φ անկյուն: Վորոշեցեք բուրգի ծավալը, յեթե զուգահեռագծի սուր անկյունը հավասար է α -ի, իսկ մակերեսը p -ի:

21. SABC բուրգի ABC նիստի մեջ A անկյունը հավասար է $\alpha = 72^\circ 36' 45''$ և B անկյունը հավասար է $\beta = 47^\circ 23' 15''$: Բուրգի ծավալը հավասար է $v = 317,058$ խորանարդ սանտիմետրի, SC կողով և ABC յեռանկյան C անկյան կիսորդով տարված է հարթություն: Այդ հարթությունն ինչպիսի՞ մասերի յե բաժանում տված ծավալը:

22. Կանոնավոր տետրաեդրի կողով տարված է այնպիսի հարթություն, վորն այդ տետրաեդրի ծավալը բաժանում է $3 : 5$ հարաբերությամբ: Ի՞նչպիսի մասերի յե բաժանվում յերկնիստ անկյունը:

Հասած բուրգ

23. Հորն ունի հատած կանոնավոր քառանկյուն բուրգի ձև: Հիմքերի կողմերը հավասար են $a = 14$ մ և $b = 10$ մ: Կողմային նիստերը հիմքի հետ կազմում են $\alpha = 38^\circ$ անկյուն: Ի՞նչքան ջուր կտանի այդ հորը:

24. Հատած կանոնավոր քառանկյուն բուրգի մեջ տված են մեծ և փոքր հիմքերի կողմերը՝ a և b և կողմային նիստի α սուր անկյունը: Վորոշեցեք այդ հատած բուրգի ծավալը ($a = 25,704$; $b = 15,23$; $\alpha = 65^\circ 12'$):


25 (26). Հատած կանոնավոր n -անկյուն բուրգի հիմքերի կողմերը հավասար են a և b : Կողմային կողը հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն: Գտեք ծավալը:

26 (29). Գլանի կողմային մակերևույթը փոխվածքի մեջ ներկայացվում է մի ուղղանկյունով, վորի մեջ անկյունագիծը հավասար է d -ի և հիմքի հետ կազմում է α անկյուն: Վորոշեցեք գլանի ծավալը:

27 (30). Գլանի հիմքի շրջանի մեջ տարված է a յերկարությամբ մի լար: Այդ լարի համապատասխան կենտրոնական անկյունը հավասար է α -ի: Գլանի բարձրությունը h է: Գտեք այդ գլանի ծավալը ($a = 4,8$ զմ; $\alpha = 26^\circ 32' 46''$; $h = 23$ զմ):

28 (31). Հավասարակողմ գլանի (այսինքն մի գլանի, վորի հիմքի տրամագիծը հավասար է ծնիչին) հիմքին ներգծած է կանոնավոր n -անկյուն, վորի կողմը հավասար է a -ի: Վորոշեցեք այդ գլանի ծավալը:

29 (32). Հորիզոնական զիճակում հաստատված գլանային բաքը լցված է հեղուկով (գծ. 40): AB աղեղը պարունակում է $\alpha = 135^\circ$: Բաքի տրամագիծը (ներքին) հավասար է $D = 1,7$ մ: Բաքի լերկարությունը (ներքին) հավասար է $l = 3,5$ մ: Վորոշեցեք հեղուկի քանակը:



Գծ. 40

հարթություն, ապա այդ հարթությունների միջև կազմված անկյունը հավասար կլինի α -ի, իսկ այդ հարթությունների և խողովակի հիմքի ներքին շրջանագծի շոշափման կետերը միացնող լարը հավասար է b -ի:

31 (34). Գլանի հիմքի մեջ տարված է այդ հիմքին ներգծած կանոնավոր n -անկյան կողմին հավասար մի լար: Յեթե այդ լարի ծայրերը միացնենք մյուս հիմքի կենտրոնին, ապա ստացված յեռանկյան մակերեսը հավասար կլինի Q -ի, իսկ գագաթի անկյունը α -ի: Վորոշեցեք սվյալ գլանի ծավալը (V):

Կ ո ն

32 (35). Մանր ավաղի համար շեպի անկյունը հավասար է $\varphi = 31^\circ$: Ավաղի կույտը կոնի ձև ունի: Այդ կոնի հիմքի շրջանագծի յերկարությունը հավասար է $c = 11$ մ: Ավաղի տեսակարար կշիռը՝ $d = 1,6$: Վորոշեցեք ավաղի այդ կույտի քաշը:

33 (36). Կոնի ծնիչի և առանցքի միջև կազմված անկյունը հավասար է $\alpha = 18^\circ 45' 50''$, ծնիչի յերկարությունը՝ $l = 36,17$ դմ: Վորոշեցեք այդ կոնի ծավալը (V):

34 (37). Կոնի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն, իսկ բարձրությունը հավասար է h -ի: Վորոշեցեք այդ կոնի ծավալը:

35 (38). Կոնի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն: Հիմքի շառավիղը հավասար է R -ի: Վորոշեցեք կոնի S լրիվ մակերեսությունը և V ծավալը:

36 (39). Կոնի առանցքային հատվածքը մի յեռանկյուն է, վորի գագաթի անկյունը հավասար է α -ի: Այդ յեռանկյան արտագծած շրջանի շառավիղը հավասար է R -ի: Վորոշեցեք այդ կոնի ծավալը:

37 (40). Կոնի հիմքի մեջ a լարը ձգում է α աղեղը. կոնի ծնիչի և բարձրության միջև կազմված անկյունը հավասար է β -ի: Վորոշեցեք այդ կոնի ծավալը:

30 (33). Վորոշեցեք H բարձրությունն ունեցող գլանաձև խողովակի ծավալը, զիտնալով, վոր յեթե այդ խողովակի արտաքին մակերեսային ծնիչով անցկացնենք ներքին մակերեսային շոշափող յերկու

38 (41). Կոնի ծնիչի և բարձրության յերկարությունների տարբերությունը հավասար է $d = 2,5$ մ, իսկ դրանցով կազմված անկյունը՝ $\alpha = 42^\circ 38' 16''$: Վորոշեցեք այդ կոնի ծավալը:

39 (42). $R = 5,38$ դմ շառավիղն ունեցող շրջանը ծառայում է վորպես ընդհանուր հիմք յերկու կոների, վորոնք կառուցված են ընդհանուր հիմքի մի կողմում: Կոներից մեկի ծնիչը հիմքի հարթության հետ կազմում է $\alpha = 74^\circ 28'$ անկյունը, իսկ մյուս կոնի ծնիչը նույն հարթության հետ կազմում է $\beta = 0^\circ 12'$ անկյունը: Վորոշեցեք այդ կոների կողմնային մակերեսային յերկու սահմանագծված ծավալը:


Հատած կոն

40 (43). Հատած կոնի ծնիչը R շառավիղն ունեցող հիմքի հետ կազմում է α անկյունը: Մյուս հիմքի շառավիղը հավասար է r -ի:

Գտեք այդ հատած կոնի ծավալը:

41 (44). Հատած կոնի հիմքերի մակերեսների հարաբերությունը հավասար է 4 -ի, ծնիչը հավասար է 1 -ի և հիմքի հարթության հետ կազմում է φ անկյուն: Վորոշեցեք այդ հատած կոնի ծավալը:

42 (45). 41-րդ գծագրի վրա պատկերացված է դոմնային վառարանի յերկայնական կտրվածքը: Դոմնային վառարանի ներքին մասը կազմված է յերկու հատած կոնից: Վերևի և ներքևի անցքերի շառավիղները հավասար են r_1 -ի և r_2 -ի: Ծնիչներն ընդհանուր հիմքի հետ կազմում են α և β անկյունները: Ամբողջ ծավալը հավասար է V -ի: Վորոշեցեք կոների ընդհանուր հիմքի r շառավիղը և այդ կոների h և h_1 բարձրությունները ($2r_1 = 4,2$ մ; $2r_2 = 4,9$ մ; $\alpha = 86^\circ$; $V = 572,6$ մ³):



Գծ. 41

43 (46). Հատած կոնի մեջ տեղավորվում է մի լրիվ կոն, վորի հիմքը հատած կոնի փոքր հիմքն է, բարձրությունը՝ հատած կոնի բարձրությունն է, և ծնիչները համապատասխանաբար զուգահեռ են հատած կոնի ծնիչներին: Վորոշեցեք հատած կոնի ծավալը, յեթե հայտնի յե, վոր այդ հատած կոնի ծնիչների շարունակությունների միջև կազմված ամենամեծ անկյունը հավասար է $\alpha = 65^\circ 49' 48''$ և ծնիչներից յուրաքանչյուրը հավասար է $a = 24,9$ դմ:

44 (47). Հատած կոնի մեջ առանցքային հատվածքի անկյունագծերը փոխադարձ ուղղահայաց են, իսկ ծնիչը մեծ հիմքի հարթության հետ կազմում է α անկյուն և հավասար է 1 -ի: Վորոշեցեք այդ հատած կոնի ծավալը ($l = 12$; $\alpha = 70^\circ 20'$):

§ 22. ԳՈՒՆԻ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՍԵՐԸ


Գ ու ն դ

1. Յերկրագնդի շառավիղը հավասար է 6370 կմ-ի: Մոսկվան գտնվում է հյուսիսային լայնության 56° -ի վրա: Վորոշեցեք այդ լայնության շրջանի շառավիղը:

2. Յերկրագնդի շառավիղը հավասար է 6370 կմ-ի: Վորոշեցեք արևադարձի ($23^\circ 27'$ լայնություն) և բևեռային շրջանի ($66^\circ 33'$ լայնություն) յերկարությունը:

3. Սարի գագաթին A կետում գտնվող գիտողը չափեց տեսողության դեպի հորիզոն ուղղված AC ճառագայթի և AD ուղղաձիգ գծի միջև կազմված $\angle DAC = \alpha$ անկյունը (գծ. 42): Գիտենալով յերկրագնդի շառավիղը (r), վորոշեցեք սարի բարձրությունը ($AD = x$):

4. $V = 53,377$ դմ³ ծավալ ունեցող գնդին ներգծած է մի կոն: Կոնի հիմքի տրամագծերից մեկի ծայրերից անցնող ծնիչներով կազմած անկյունը հավասար է $\alpha = 42^\circ 18'$: Վորոշեցեք այդ կոնի ծավալը:



Գծ. 42

5. Կոնի ծնիչն առանցքի հետ կազմում է $\alpha = 35^\circ 18' 20''$ անկյուն: Վորոշեցեք կոնի ծավալի հարաբերությունն այդ կոնի արտագծած գնդի ծավալին:

6. Կանոնավոր n-անկյուն բուրգի հիմքի կողմը հավասար է a-ի, հիմքի յերկնիստ անկյունը հավասար է φ -ի: Վորոշեցեք այդ բուրգին ներգծած գնդի շառավիղը:

7. Վորոշեցեք կանոնավոր n-անկյուն բուրգին արտագծած գնդի շառավիղը, յեթե այդ բուրգի հիմքի կողմը հավասար է a-ի, իսկ կողմնային կողը հիմքի հարթություն հետ կազմում է α անկյուն ($n=8$: $a=3,5$ մ; $\alpha=58^\circ 37' 42''$):

8. Բուրգի հիմքը մի շեղանկյուն է, վորի կողմն a յե, իսկ սուր անկյունը՝ α : Հիմքին առնթիւր յերկնիստ անկյունները հավասար են φ : Վորոշեցեք այդ բուրգին ներգծած գնդի շառավիղը:

9. Կոնի մեջ տված են հիմքի շրջանագծի C յերկարությունը և ծնիչի ու հիմքի հարթության միջև կազմված α անկյունը: Վորոշեցեք կոնի կողմնային մակերևույթի և այդ կոնին ներգծած գնդի մակերևույթի փոխադասման գծի յերկարությունը:

10*. Գնդի մակերևույթի վորևե կետից տարված են յերեք հավասար լարեր, վորոնք իրար հետ կազմում են α անկյուն: Վորոշեցեք այդ լարերի յերկարությունը, յեթե գնդի շառավիղը հավասար է R-ի:

11. Վորոշեցեք կոնի ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված

անկյունը, յեթե հիմքի մակերեսը, ներգծած գնդի մակերևույթը և կոնի կողմնային մակերևույթը թվաբանական պրոգրեսիա յեն կազմում:

12. Կոնը m անգամ մեծ է այդ կոնին ներգծած գնդից: Վորոշեցեք այդ կոնի ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը: (Գտեք m-ի ամենափոքր արժեքը, հաշվեցեք անկյունը, յեթե $m = 2 \frac{1}{4}$):

13. Կոնի ծավալը կիսող լայնական հատվածքն անցնում է արտագծած գնդի կենտրոնով: Վորոշեցեք ծնիչի և հիմքի հարթության միջև կազմված անկյունը:

14. Վորոշեցեք կոնի առանցքային հատվածքի գագաթի անկյունը, յեթե այդ կոնն արտագծված է չորս հավասար գնդերի, վորոնք դասավորված են այնպես, վոր դրանցից յուրաքանչյուրը շոշափում է մնացած յերեքին:


15. Գնդին արտագծած հատած կոնի կողմնային մակերևույթը հարաբերում է գնդի մակերևույթին այնպես, ինչպես $m:n$: Վորոշեցեք ծնիչի և մեծ հիմքի միջև կազմված անկյունը ($\frac{m}{n} = \frac{2}{1}$):

16. Հատած կոնի հիմքերի շառավիղները հավասար են R-ի և r-ի, իսկ ծնիչը թեքված է դեպի ներքևի հիմքի հարթությունն α անկյան տակ: Վորոշեցեք այդ հատած կոնին արտագծած գնդի շառավիղը:

17. Հատած կոնի հիմքերի շառավիղներն են r_1 և r_2 ($r_1 > r_2$): Այդ հատած կոնին ներգծված է գունդ: Վորոշեցեք՝ 1) գնդի մակերևույթը և 2) կոնի ծնիչի թեքություն անկյունը հիմքի հարթության նկատմամբ:

18. Կոնի մեջ տեղավորված են յերեք գնդեր այնպես, վոր դրանք շոշափում են թե մեկը մյուսին և թե կոնի մակերևույթին (գծ. 43): Գնդերի EM և ON շառավիղների հարաբերությունը հավասար է $\frac{m}{n}$ -ի: Վորոշեցեք կոնի առանցքով տարած հատվածքի գագաթի ABC անկյունը ($m:n=3:1$):

19. Կոնի հիմքի շառավիղը հավասար է R-ի, իսկ ծնիչը թեքված է դեպի հիմքի հարթությունն α անկյան տակ: Այդ կոնին ներգծված են մի շարք գնդեր այնպես, վոր առաջին գունդը շոշափում է բուրգի հիմքն ու կողմնային մակերևույթը, իսկ հաջորդ յուրաքանչյուր գունդը շոշափում է բուրգի կողմնային մակերևույթին ու նախորդ գունդը: Գտեք այն սահմանը, վորին ձգտում է այդ գնդերի ծավալների գումարը, յեթե գնդերի թիվը անվերջ մեծացնենք:




Գծ. 43

Գնդի մասերը

20. Բաճն ունի գնդի ձև: Այդ բաճը մինչև վերոշ բարձրությունը լցված է մի հեղուկով, վորի տեսակարար կշիռը հավասար է d -ի, AB աղեղը (գծ. 44) պարունակում է φ° : Բաճի շառավիղը (ներքին) հավասար է R -ի: Վորոշեցեք հեղուկի կշիռը:

21. Գաղամբարը կազմված է մի գլանից, վորը վերևից ծածկված է գնդային սեղմենտով: Գլանի ներքին չափսերն են՝ տրամագիծը — 24 մ, բարձրությունը — 6 մ: Գլանը ծածկող գնդային սեղմենտի առանցքային հատվածքում ստացված աղեղը պարունակում է $73^\circ 44'$: Գտեք գաղամբարի տարողությունը:



Գծ. 44

մենտի առանցքային հատվածքի մեջ աղեղը հավասար է α -ի, իսկ լարի յերկարությունը՝ a -ի:

24. Գնդային սեղմենտի առանցքային հատվածքի մեջ աղեղը հավասար է $\alpha = 65^\circ 28' 36''$: Այն գնդի շառավիղը, վորից անջատված է տված սեղմենտը, հավասար է $R = 24$ դմ: Վորոշեցեք այդ սեղմենտի կոր մակերևույթը:

25. Գնդային սեկտորի առանցքային հատվածքի սեղմենտի աղեղը հավասար է α -ի, իսկ այդ աղեղին ձգող լարը՝ b -ի: Վորոշեցեք սեկտորի ծավալը ($b = 25,135$; $\alpha = 63^\circ 17' 36''$):

26. Գնդի ծավալը հավասար է V -ի: Վորոշեցեք այդ գնդի այն սեկտորի ծավալը, վորի առանցքային հատվածքի կենտրոնական անկյունը հավասար է α -ի:

27. Գնդային սեկտորի գագաթի անկյունը հավասար է α -ի, իսկ շառավիղը՝ R -ի: Վորոշեցեք այդ սեկտորի լրիվ մակերևույթը:

28 (10). Կոնական մակերևույթին ներգծված է գունդ. շոշափման գծով այդ գնդի մակերևույթը բաժանվում է $m:n$ հարաբերությամբ: Վորոշեցեք կոնական մակերևույթի ծնիչի թեքությունն առանցքի նկատմամբ ($m:n = 1:3$):

29 (30). Շրջանային սեկտորի աղեղը հավասար է α -ի (180° -ից փոքր): Այդ սեկտորը պտտվում է նրանից դուրս գտնվող տրամագծի շուրջը: Ստացված մարմնի ծավալը հարաբերում է նույն շառավիղին

